2026, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (707)

Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց





Օգոստոսի 2-ին **ԱԺ պատգամավորների**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ազգային ժողովի 9-րդ գումարման «Ուժեղ Հայաստան» և «Հայաստան» խմբակցությունների պատգամավորներին:

Նորընտիր պատգամավորների անունից Նորին Սրբությանը ողջունեցին խմբակցությունների ղեկավարներ տիար Նարեկ Կարապետյանն ու տիկին Աննա Գրիգորյանը:

«Ուժեղ Հայաստան» խմբակցության ղեկավար Նարեկ Կարապետյանն իր խոսքում նշեց. «Չնայած օրենսդրությամբ սահմանված կարգավորմանը, որ Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացմանը ելույթի իրավունք վերապահված է Ամենայն Հայոց Կաթողիկոսին, այն չէր ապահովվել: Այդ իսկ պատճառով «Ուժեղ Հայաստան» խմբակցությունը եկել է Մայր Աթոռ՝ օրհնություն ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսից»:

«Հայաստան» խմբակցության ղեկավար Աննա Գրիգորյանն արձանագրեց, որ իբրև Հայոց Եկեղեցու զավակներ և նաև ՀՀ բարձրագույն օրենսդիր մարմնի պատգամավորներ՝ իրենց հոգևոր պարտքն էր այսօր այցելել Վեհափառ Հայրապետին: «Ցավոք, այս իշխանության ապազգային արշավի պայմաններում, երբ առաջին անգամ մեր պետության պատմության մեջ Վեհափառի պատգամը, աղոթքն ու մաղթանքը չլսվեցին Ազ անդրանիկ նիստում, պարտավոր էինք սրբագրել կատարվածը»,— ընդգծեց նա:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ողջույններն ու օրհնությունը փոխանցեց պատգամավորներին՝ ընդգծելով, որ հայտնի պատճառներով հնարավորություն չի ունեցել, ըստ սահմանված կարգի և ձևավորված ավանդության, մասնակցելու Ազգային ժողովի անդրանիկ նիստին և բերելու պատգամավորներին Սուրբ Էջմիածնի օրհնությունը և հայրապետական իր պատգամը:

Վեհափառ Հայրապետն ի մասնավորի խոսեց երկրում և ազգային կյանքում տիրող մտահոգիչ կացության և առկա ծանր հիմնախնդիրների մասին:

«Այսօր մեր երկրի առջև ծառացած արտաքին և ներքին մարտահրավերները ենթադրում են նոր փորձություններ, որոնց հաղթահարման հնարավոր ուղիները պահանջում են առավելագույն ջանքեր, պետական ու ազգային կառույցների, մասնագիտական տարբեր ասպարեզներում քաջահմուտ գործիչների համախմբվածություն: Այս իրավիճակի հանդիման մեծապես մտահոգիչ են նաև ներազգային կյանքում տիրող անհամերաշխությունը, ջլատիչ, վնասաբեր գործողությունները, հասարակության պառակտվածությունը, քաղաքական բևեռացումը, նվիրական արժեքների և ընկալումների աղավաղումը, նաև Հայոց Եկեղեցու դեմ գործադրվող օրինազանց, հակասահմանադրական քայլերը, որոնք խոչընդոտում են Եկեղեցու արդյունավոր առաքելությունը ազգային անդաստանում: Նման անընդունելի երևույթները խարխլում են ազգային միաբանության հիմքերը, Սփյուռք-Հայաստան հարաբերությունները, խաթարում հանրության մեջ փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտը, ժողովրդավարության և օրինականության ամրապնդումը, արդարության ու ճշմարտության գերակայությունը»,— նշեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունն իր խոսքում նաև ընդգծեց. «Մենք մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ Եկեղեցի ենք, և այս ամբողջությունն է հուսալի ապավենը աշխարհասփյուռ մեր ժողովրդի գոյատևման ու հարատևության և իղձերի մարմնավորման:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր բազմադարյա ծառայության ընթացքում միշտ սատար է եղել ազգին ու հայրենիքին, պետականության առկայության պայմաններում նաև աջակից եղել իշխանություններին՝ կերտելու հզոր ու բարեկեցիկ երկիր և իրականություն դարձնելու երջանիկ ապագայի ազնիվ հույսերը»: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ Եկեղեցին պիտի շարունակի իր կարողություններով զորավիգ լինել հայոց պետությանը բոլոր բարի իրագործումներում՝ միտված մեր ազգի բարօրության ու առաջընթացի ապահովմանը, հայրենիքի զորացմանն ու պայծառությանը:

Ազգային ժողովի 9-րդ գումարման աշխատանքների մեկնարկի կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց նորընտիր պատգամավորներին օրենսդիր առաքելության մեջ լինել նախանձախնդիր, հավատարիմ իրենց կոչմանը և հանձնառություններին՝ գործել հանուն հայրենիքի անվտանգության, հայոց անկախ պետականության զորացման և ի բարօրություն ժողովրդի: Նորին Սրբությունը նաև պատգամեց առաջնորդվել ազգային համընդհանուր նպատակների իրագործման բարձր գիտակցությամբ, ժողովրդին օրինակ ծառայել արդարամտությամբ, պարկեշտությամբ և ազնվությամբ:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը հայցեց երկնավորից խաղաղ պահել հայոց պետությունը, համախումբ ու անխոով՝ աշխարհասփյուռ հայ ժողովրդին, և պատգամավորներին մաղթեց արդյունավոր աշխատանք՝ ի նպաստ մեր երկրի բարգավաճման ու առաջընթացի:

Վերջում Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն արտահայտեց խմբակցությունների պատգամավորներին Հայոց Եկեղեցու հանդեպ դրսևորած նվիրումի և որդիական սիրո համար հատկապես դժվարին այս շրջանում, երբ տակավին շարունակվում են իշխանությունների կողմից սանձազերծված արշավն ու բռնաճնշումները, երբ ի պաշտպանություն Սուրբ Էջմիածնի արտահայտության համար առայսօր կալանքի տակ է մնում ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանը:

Հանդիպումն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով:



Օգոստոսի 6-ին **Արգենտինահայ դպրոցականներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Արգենտինայի հայոց թեմի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», «Դերձակյան» երկրորդական վարժարանների, «Արծրունի» և ՀԲԸՄ «Մարի Մանուկյան» ազգային վարժարանների շրջանավարտներին:

Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունն ու սերը փոխանցելով Արգենտինայից ժամանած հայորդիներին, շնորհավորեց նրանց ուսումնառության կարևոր փուլի ավարտի առիթով՝ գոհունակությամբ ընդգծելով, որ համայնքային կյանքում ազգային կրթական հաստատությունների առաքելությունը մեծապես նպաստում է հայի ինքնության պահպանմանը և մատաղ սերնդի՝ ազգային ու հոգևոր նկարագրի կերտմանը: ➥ *էջ 2*



Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Օգոստոսի 16-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնը:

Բերկրառատ օրվա առիթով Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանը: Ներկայացնելով տոնի խորհուրդը՝ պատարագիչ Սրբազանը խոսեց Աստվածածնի ավետարանական կերպարի մասին, որով մենք տեսնում ենք, թե ինչպես է Սուրբ Կույսը հնազանդությամբ ստանձնում Տիրամոր պատիվը և իր ժողովրդի համար իբրև բարեխոս մշտապես դիմում իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Այս առիթով Հայկազուն սրբազանը հորդորեց ներկաներին, որ իրենց աղոթքներում մշտապես խնդրեն Աստվածամոր բարեխոսությունը:

Այնուհետև Սրբազան Հայրը, անդրադառնալով Վերափոխման տոնի հետ կապված բանավոր ավանդությանն ու Եկեղեցում և հայ իրականության մեջ Սուրբ Կույսի նշանակալի տեղին, ընդգծեց, որ մեր հայրերը բազմաթիվ եկեղեցիներ և սրբավայրեր կոչել են Աստվածամոր պատվին, մեր եկեղեցիների խորանները ևվիրվել են Սուրբ Կույսին՝ մանուկ Հիսուսի հետ միասին, իսկ հայ մայրերից շատերը դուստրերին անվանել են Մարիամ՝ իրենց մտքում ունենալով Տիրամոր բացառիկ առաքինի կերպարը:

Սուրբ Պատարագի ավարտից հետո եկեղեցականաց թափորը Մայր Տաճարից ուղղվեց դեպի Սուրբ Տրդատի բաց խորան, որտեղ հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ կատարվեց «Խաղողօրհնեքի» հանդիսավոր կարգը:

Հավարտ օրհնության կարգի Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց հավատավոր ժողովրդին, որից հետո ներկաներին բաժանվեցին օրհնված խաղողի ողկույզները:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Խաղողօրհնեքի արարողության ավարտին

Իրելի՛ բարեպաշտ հավատավոր զավակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, կատարեցինք Խաղողօրհնության կարգը, օրհնեցինք խաղողի ողկույզները և այն այգիներն ու անդաստանները, որտեղից առաքվում, բերվում են պտուղները՝ ի վայելումն մեր ժողովրդի:

Մենք միաժամանակ հայց և աղոթք բարձրացրինք, որպեսզի Սուրբ Աստվածամոր բարեխոսությամբ առատորեն հեղվեն շնորհներն ու օրհնությունները մեր կյանքի, մեր կյանքը դառնա պտղաբեր՝ բարությամբ ու բարիքներով, և մենք՝ մեր ժողովրդի զավակունք, ի Հայաստան և ի Սփյուռս, լավատեսությամբ, հույսով ու հավատքով շարունակենք արարել, շենացնել մեր հայրենիքը և բարօր դարձնել մեր ժողովրդի կյանքը, որպեսզի կարող լինենք մշտապես հեռու վանել ժամանակների մատուցած բոլոր փորձություններր մեզնից և կարողանանք կերտել լուսավոր, բարօր, երջանկաբեր ապագան մեր ժողովրդի համար:

Թող Տիրոջ սերը, շնորհը և օրհնությունը միշտ լինեն ազգիս զավակների հետ՝ այսօր և հավիտյանս. Ամեն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Արգենտինահայ դպրոցականներին

↩ էջ 1

Նորին Սրբությունը հավելեց, որ գեղեցիկ ավանդույթ է դարձել սփյուռքահայ երիտասարդների այցը Հայաստան, ինչը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու հայրենի իրականությանը, տարբեր ճանաչողական այցելություններով հաղորդ դառնալու պատմական անցյալին ու ժառանգությանը: Անդրադառնալով Սուրբ Էջմիածնի դերին և առաքելությանը՝ Վեհափառ Հայրապետը նկատեց, որ աշխարհասփյուռ հայությունն ուժ ու զորություն է ստացել Սուրբ Էջմիածնից և հայրենի հողից:



Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը նաև իր գնահատանքը հայտնեց վարժարանների հոգաբարձուներին, տնօրենությանը և մանկավարժներին՝ աշակերտների հայեցի կրթության և դաստիարակության գործում ներդրած նվիրյալ ծառայության համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց շրջանավարտներին հայրենիքից ոգեշնչված և հոգեպես զորացած վերադառնալ իրենց համայնքներ, իրենց նախնյաց օրինակով լինել ազգասեր ու եկեղեցանվեր, մշտապես զորացնել արգենտինահայ համայնքային կյանքը և պահպանել ազգային գիտակցությունն ու ոգին:



Օգոստոսի 12-ին **Հայագիտական դասընթացներին մասնակից սփյուռքահայ երիտասարդներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեկնարկած հայագիտական և կրոնագիտական դասընթացների առիթով սփյուռքի տարբեր թեմերից ժամանած 32 երիտասարդների:

Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց հայրենիք ժամանած հայորդիների՝ Սուրբ Էջմիածնում համախմբման և կրթական ծրագրերում ներգրավման առիթով, որով մեծապես նպաստ է բերվում սփյուռքահայ երիտասարդների ազգային ու հոգևոր ինքնության զորացմանը, ինչպես նաև Եկեղեցու և հայրենիքի հետ կապի առավել ամրապնդմանը:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի Եկեղեցականաց և երիտասարդաց վերապատրաստման ծրագրի կազմակերպիչ հանձնախմբի անդամներին և Թեմական առաջնորդներին՝ հայագիտական սույն ծրագրի իրագործման համար:

Հանդիպման ավարտին Հայոց Հայրապետը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին ազգային-հոգևոր կյանքի խնդիրներին և Հայոց Եկեղեցու գործունեությանը:



Օգոստոսի 13-ին **Արագածոտնի թեմի քահանայից դասին ու նրանց ընտանյաց անդամներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արագածոտնի թեմի քահանայից դասին ու նրանց ընտանյաց անդամներին:

Արագածոտնի թեմի վարչական խորհրդի ատենապետ Հոգեշնորհ Տ. Շնորհք աբեղա Պալոյանն իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին հանդիպման և մշտապես ցուցաբերվող հայրական խնամքի համար:

Թեմի քահանաներից Արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Երանյանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ընդգծեց, որ նման ընդունելությունը կարևոր առիթ է՝ ուխտը վերանորոգելու և Հայոց Հայրապետին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին վերստին իրենց հավատարմությունը հայտնելու համար:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը կարևորեց նմանատիպ հանդիպումները, որոնք լավ առիթ են եկեղեցականաց հետ հոգևոր կապն առավել ամրապնդելու և նրանց ընտանյաց անդամների հետ հաղորդակցվելու համար:

Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ նաև Արագածոտնի թեմի քահանայից դասի հոգեխնամ, կարևոր ու նվիրական ծառայությանը և բարձր գնահատեց ստեղծված դժվարին իրավիճակում նրանց դրսևորած անմնացորդ նվիրումը:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին եկեղեցու առջև ծառացած մարտահրավերներին և Մայր Աթոռի գործունեությանը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը հայրապետական իր օրհնությունը բերեց քահանաներին և նրանց ընտանյաց անդամներին՝ մաղթելով քաջառողջություն ու բարօր կյանք:

Միասնական աղոթք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական պատգամը Միածնաէջ Մայր Տաճարում

Օգոստոսի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ վեց եպիսկոպոսների քրեական գործով դատական առաջին նիստից հետո Մայր Աթոռի միաբանությունը և ներկա հավատացյալ ժողովուրդը Միածնաէջ Մայր Տաճարում մասնակցեցին Երեկոյան ժամերգությանը, որի ավարտին Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու պատգամը հղեց ներկաներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մայր Տաճարում համախմբված հայորդիներին





Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր,

Հայրապետական Մեր սերը, օրհնությունն ու գնահատանքն ենք բերում ձեզ, որ դատարանի շրջափակում Հայ Եկեղեցու դեմ մերժելի գործընթացների առնչությամբ ձեր ընդվզումն արտահայտելուց հետո այժմ, համախմբված Մայր Տաճարում, միասնական աղոթք բարձրացրեցինք առ Աստված մեր Սուրբ Եկեղեցու և ժողովրդի համար:

Հայոց Եկեղեցին յուրաքանչյուր հայի հոգևոր օրրանն ու սրբություն է: Մեր Սուրբ Եկեղեցին մեր ժողովրդի հավատքի անսասան ամրոցն է, առաջնորդողը դեպի Աստված ու փրկություն և աննահանջ պահապանը հայոց ինքնության ու ազգային-հոգևոր ժառանգության:

Մեր օրերում իշխանությունների և իշխանական կառույցների կողմից քայլեր են ձեռնարկվում Եկեղեցու հեղինակությունը վնասելու, ինքնավարությունը սահմանափակելու և Եկեղեցին իրենց կամքին հպատակեցնելու, ինչպես և քաղաքական ժամանակավոր նպատակահարմարությունների առջև ազգային ինքնության ընկալումը, նվիրական ու սրբազան խորհրդանիշներն ու հիշատակները ձևափոխելու: Արդարև, Եկեղեցու ինքնավարությունն ազգի բարօրության, պետության հզորացման կարևոր գրավականներից մեկն է եղել բոլոր ժամանակներում:

Ցավով ենք անդրադառնում, որ մեր Սուրբ Եկեղեցին ու հոգևորականները իշխանությունների կողմից ենթարկվում են հետապնդումների: Ապօրինի և շինծու քրեական գործերով կապանք ու ազատության սահմանափակումներ են կիրառվել մի շարք եկեղեցականների, ազգային բարերարի և ազգանվեր ու եկեղեցասեր այլ անձանց նկատմամբ: Քիչ առաջ վերադարձանք անհիմն և հանիրավի մեղադրանքներով նաև Մեր և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ երկու արքեպիսկոպոսի ու չորս եպիսկոպոսի դեմ հարուցված դատավարության առաջին նիստից, որը չկայացավ դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու պատճառով:

Մենք լի ենք հավատով և վճռականությամբ, սիրելինե՛ր, պաշտպանելու Մեր արդար իրավունքները՝ երաշխավորված ինչպես մեր պետության սահմանադրությամբ, այնպես և միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներով:

Այս գիտակցությամբ և պատասխանատվությամբ, առ ազգն ու հայրենին սիրով Մենք շարունակելու ենք Մեր տերունապատվեր առաքելությունը՝ հակառակ բոլոր դժվարությունների և արգելքների, քանզի, ինչպես սաղմոսերգուն է ասում, «Աստված ապավենն ու զորությունն է մեր, և մեր օգնականը մեզ հասած խիստ նեղությունների մեջ» (Սաղմ. 45.2): Անտարակույս, Մեր ապավինությունն Աստված է, և Մեր ծառայությունը բարեպաշտ աշխարհասփյուռ մեր ժողովրդի և հարազատ երկրի համար է:

Սիրելի՛ հավատավոր հայորդիներ, աղոթական համախմբումի այս պահին Հայրական սիրով Մեր գնահատանքն ենք բերում ձեզ և եկեղեցասեր Մեր բոլոր զավակներին ի Հայաստան և ի սփյուռս, ազգային ու հասարակական կազմակերպություններին, փաստաբաններին, գիտական, կրթական, մշակութային, քաղաքական գործիչներին, որոնք առկա բարդ պայմաններում հաստատակամությամբ ու նախանձախնդրությամբ գորակցում են Մայր Եկեղեցուն և նրա ազգօգուտ առաքելությանը: Անկուն պիտի լինենք և միասնաբար համառ ու տևական ջանքեր ներդնենք, որ դադարեն անիրավությունները մեր երկրում, խտրականությունն ու անհանդուրժողականությունը, տարածում չգտնեն չարակամության ու ատելության խոսույթները: Մենք պիտի համառ ու տևական ջանքեր ներդնենք, որպեսզի հայրենական ու ազգային մեր անդաստանը նորոգվի եղբայրասիրությամբ ու համերաշխությամբ, և մեր կյանքում գերակայեն ճշմարտությունը, օրինականությունն ու արդարությունը, հարգվեն Եկեղեցու դարավոր կարգերն ու ավանդույթները, որ չվիրավորվեն հավատացյալների բարեպաշտական զգացումները:

Հայրապետիս հորդորն է ամենքիդ՝ լինել սթափ և խոհեմ, չտրվել սադրանքների, ևենգամիտ խարդախանքների, ամուր մնալ հավատով ու հույսով, քանզի Աստված բոլոր չարամիտ իրողություններից ու փորձություններից բարիքներ է վեր հանում իր Սուրբ Եկեղեցու և հավատացյալ ժողովրդի համար: Նեղությունների մեջ է նաև զորանում մեր հավատքը, դրսևորվում հաստատուն նվիրումը Աստծուն, հայրենիքին և Եկեղեցուն, անխախտ հավատարմությունը՝ ազգային-հոգևոր մեր սրբազան արժեքներին: Արտաքին և ներքին սպառնալիքների հանդիման ամրապնդենք մեր ազգային միաբանությունը, արդյունավորենք մեր ընթացքը հայրենանվեր ու ազգաշահ գործերով և ըստ առաքյալի պատգամի՝ զորանանք Տիրոջով և Նրա զորության կարողությամբ (Եփ. 6.10): Հավատում ենք, որ մեր Սուրբ Եկեղեցին Աստծո ողորմությամբ և մեր ժողովրդի անսակարկ նվիրումով ու սիրով պիտի հաղթահարի այս նեղությունները նույնպես և նոր հաջողություններ ամրագրի իր առաքելության ճանապարհին՝ ի բարօրություն և ի պայծառություն համայն հայոց կյանքի:

Մեր հայացքն ուղղված է Աստծուն և Մեր ջանքերը՝ հայրենիքի շինության ու մեր ժողովրդի սպասավորության: Թող Աստված օրհնի հայոց պետությունը, անվրդով ու խաղաղ պահի մեր ժողովրդին ի հայրենիս և ի սփյուռս այսօր և միշտ և հավիտյան:

Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեան. ամէն:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Զաքարիա Զագեցու ճառը՝ Ամենօրհնյալ Տիրուհի Աստվածածնի և միշտ կույս Մարիամի ննջման մասին

Սկիզբը՝ թիվ 13, 14

Տասնհինգ տարեկան էր ամենաերջանիկ Մարիամը, երբ ծնվեց Աստծո Բանը, Որն անժամանակ էր ծնվել Հորից: Քանի որ նրա զարդափայլ ու հրեշտակատեսիլ կուսությունը մնացել էր անձեռնմխելի, ամեն ոք վկայում և ճանաչում էր նրան՝ իր դեմքի զարմանալի ու հրաշափառ գեղեցկությամբ: Նրանք, ովքեր ուշադիր նայում էին, տեսնում էին նրա անթառամ ու վարդագույն երեսը՝ գեղեցկորեն պաճուճված, ինչպես գարնանային հովիտը՝ զարդարված, շքեղացած ու բարետես դարձած զանազան ու համասփյուռ ծաղիկներով: Եվ անարատ ու անապական կաթն էր բխում-հորդում նրա սուրբ ու անբիծ ստինքներից՝ սնելու համար ամենքի Արարչին: Իսկ Փրկչի՝ աշխարհիս կյանք պարգևող չարչարանքների ժամանակ սուրբ և անարատ [Մարիամը] քառասունութ տարեկան էր: Եվ երբ մեր Քավիչը՝ Քրիստոս, եկավ Ձիթենյաց լեռ և պատրաստվում էր համբարձվելու Իր անպատմելի աստվածության փառքով, կանանց մեջ ամենաերջանիկը՝ [Մարիամը], կանգնեց փառքի Թագավորի առջև և սրտամաշ ու մորմոքող սրտով թախանձելով՝ ասաց ամենքի Փրկչին. «Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ, Արարի՛չս և Որդի՛ս, ի՞նչ կհրամայես իմ մասին, երբ համբարձվես Քո հայրական փառքին: Եվ ինչո՞ւ ես ինձ լքված թողնում՝ առանց խնամքի ու առանց տիրոջ շրջելու այս կյանքում: Քանզի հեթանոսների մեջ ինձ համար հանգիստ չկա, իսկ հրեաների անօրինությունն ու կատաղի ապերախտությունը, Տե՛ր, Դու քաջ գիտես, քանի որ գաղտնիքների գիտակ ես և ճանաչում ես [ամեն ինչ]: Արդ, ո՛ւմ ապավինեմ, որ լինեմ ապահով»: Ասաց ամենքի Փրկիչը. «Մա՛յր Իմ, տաճա՛ր և անպատմելի մարդեղությանս առագաստ, Իմ անհասանելի տնօրինության բանական խորա՛ն: Ես քեզ ոչ թե արհամարհելով անտես եմ անում կամ լիովին լքված թողնում, այլ ինչպես որ քեզ հանձնեցի Իմ սիրելի ու հավատարիմ աշակերտին, այնպես էլ այս աշխարհում քեզ որոշ ժամանակ կթողնեմ Իմ մտերիմ աշակերտների մեջ, որպեսզի նրանք, օրեցօր քեզ նայելով, սփոփվեն ու մխիթարվեն: Եվ դու ականատես կլինես ու կտեսնես այն նշանների ու հրաշքների զորությունը, որոնք Իմ անունով կկատարվեն նրանց ձեռքով՝ ի զարմանս և ի հիացմունք համայն տիեզերքի: Կտեսնես նաև Սուրբ Հոգու անպարտելի զորությունը, որը գալու և իջնելու է ձեզ վրա: Եվ քանի որ քո սիրտը թուլացավ ու կասկածով լցվեց՝ տեսնելով Ինձ խաչի վրա բարձրացած մարդկային ցեղի մեղքերի համար, [այժմ] թող քո անձը քաջալերվի ու զորանա այն նշանների ու հրաշքների միջոցով, որոնք կատարվելու են Իմ անունով: Եվ երբ լրանա քո կյանքի ժամանակը՝ ըստ քեզ համար սահմանված Իմ կամքի, Ես քեզ մոտ ո՛չ հրեշտակի կուղարկեմ, ո՛չ հրեշտակապետի և ո՛չ էլ վերին իշխանությունների գերագույն զորքերից որևէ մեկին, այլ Ես Ինքս կգամ՝ պատվով զարդափայլ ու հրաշալի փառքով, և քեզ կվերափոխեմ դեպի հրաշափառ, տենչալի ու գեղապանծ դրախտի վայելչությունը»:

Եվ այս խոսքերից հետո, մարմնով անարատ կյանք վարելով, երջանիկ Մարիամը, որի սուրբ անունը թարգմանվում է՝ «լուսավորվում եմ», ապրեց ևս տասնմեկ տարի: Եվ սուրբ, անարատ Աստվածածնի կյանքի բոլոր ժամանակները լրանալով՝ ամբողջացան հիսունհինը տարով: Եվ նրա զարդափայլ կերպարանքի գեղեցկության ու վայելչության մեջ ոչ մի փոփոխություն չեղավ, այլ ինչպես որ երբեմն Տիրոջ տաճարում հրաշազարդված էր նրա դեմքը՝ հոյակապ ու աշխարհով մեկ հռչակված, այնպես էլ նրա փառավորյալ դեմքը, ի զարմանս իր համբավի, մինչև ժամանակների լրանալը մնաց անփոփոխ ու անթառամ և երբեք չծերացավ: ➥ *էջ 4*

Զաքարիա Զագեցու ճառը՝ Ամենօրհնյալ Տիրուհի Աստվածածնի և միշտ կույս Մարիամի ննջման մասին

↩ էջ 3

Եվ բոլոր տեսնողների համար հայտնի էր, որ նրա փառավոր կուսությունը ոչ մի փոփոխության չենթարկվեց, այլ մնաց անապական և անձեռնմխելի:

Եվ երանելի սուրբ Կույսը բնակվում էր Երուսաղեմում՝ իր ծնողների տանը: Հովհաննեսը սպասավորում էր նրան և կյանքի խոսքն էր քարոզում հրեաների մեջ: Եվ մի օր Աստվածածնին մի տեսիլք երևաց, թե՝ «Այս կյանքից տեղափոխվելու ես ողջերի աշխարհը»: Այն ժամանակ նա [աղոթքով] դիմեց և Տիրոջը խնդրեց՝ տեսնելու բոլոր երջանիկ սուրբ առաքյալներին: Քանզի նրանք մեկնել էին օտար երկրներ և ցրվել տիեզերքով մեկ՝ համայն աշխարհին քարոզելու փրկության Ավետարանը:

Եվ սուրբ ամպերը, յուրաքանչյուր երկրից ու զանազան գործերից հափշտակելով աստվածազգյաց սուրբ առաքյալներին, ակնթարթորեն բերեցին ու հավաքեցին Երուսաղեմում: Նրանք կանգնեցին սուրբ Աստվածածնի առջև, մինչ նա դեռ պառկած էր իր սուրբ մահճում: Եվ սուրբ առաքյալները, շրջան կազմած, նստեցին նրա մահճի շուրջը և արթուն մնալով ու ջանալով՝ միմյանց հետ խոսում էին փրկության խոսքի մասին: Եվ կեսգիշերին սաստիկ շարժում եղավ, հրաշքներ ու փայլատակումներ ճառագայթեցին՝ բորբոքվելով ու վառվելով նրանց շուրջը: Եվ ահա Քրիստոսը՝ տերերի Տերը և սերովբեների Թագավորը, հայտնվելով՝ կանգնեց նրանց մեջ: Եվ երբ լուսացավ, ննջեց ամենօրհնյալ Աստվածածինը: Այնժամ փառքի Տերն անտեսանելի եղավ նրանցից: Եվ երանելի առաքյալները վերցրին սուրբ մարմինը՝ ջահերով ու մոմերով, սաղմոսներով ու օրհնություններով, իսկ սուրբ հրեշտակների զորքերը, վայր իջնելով, նրանց ձայնակցելով, երգում էին: Եվ քաղաքը լցվեց նրանց հոգևոր երգերի հնչյուններով: Նրանք, ովքեր երկնքից էին իջել, երգում էին այդ բարձրածայն, գեղեցիկ ու ներդաշնակ օրհներգը: Եվ լուրն առնելով՝ խառնիճաղանջ ողջ բազմությունը մեկտեղ հավաքվեց ու փութով վազեց՝ տեսնելու այդ հրաշափառ ու բարձրագույն սքանչելի գործը: Դրանից անօրեն հրեաները, չարությամբ լցված, կամեցան հափշտակել ու այրել այդ սուրբ հոգևոր գանձը [Աստվածածնի մարմինը]: Եվ հրեա քահանայապետը, առաջ վազելով, կառչեց դագաղից՝ կամենալով այն գետնին տապալել: Սակայն նրա ձեռքերը, արմունկներից կտրվելով, դաստակներով կպած մնացին դագաղին: Եվ նա աղաղակեց Պետրոսին ու նրա աշակերտներին՝ ասելով. «Ողորմեք ինձ, Քրիստոսի՛ աշակերտներ»: Պետրոսը հարցրեց. «Հավատո՞ւմ ես Աստծո անժամանակ Բանին»: Եվ նա պատասխանեց. «Հավատում եմ»: Այնժամ ձեռքերի կտրված հոդերը մոտեցրին միմյանց, և դրանք նույն պահին ողջացան: Այդ օրը շատերը հավատացին և մկրտվեցին՝ հանուն Քրիստոսի: Իսկ սուրբ առաքյալները, տանելով ամենօրհնյալ սրբուհու մարմինը, ամփոփեցին Գեթսեմանիի ձորում: Այնուհետև առաքյալները մի քանի օր մնացին Երուսաղեմում՝ քննարկելու և մեկտեղելու փրկության Ավետարանի քարոզչությունը, որով կյանքի հավատն էին ավանդում հրեաներին ու հեթանոսներին: Եվ ահա երրորդ օրը Հնդկաստանից եկավ նաև Թովմասը: Նա աղաչեց ու խնդրեց Պետրոսին և մյուս առաքյալներին՝ տեսնելու կյանքի գանձը՝ երջանիկ Մարիամի՝ անարատ Աստվածածնի սուրբ մարմինը, որպեսզի ինքն էլ արժանի լինի համբուրելու Աստծո անպատմելի Բանի տաճարը: Աշակերտները միասնաբար ճանապարհ ընկան դեպի սրբազան գանձարանի (գերեզմանի) վայրը՝ կատարելու Թովմասի փափագը. նրանց հետ էին նաև մեծաթիվ ժողովուրդ ու բազմություն: Եվ ահով ու դողով աղոթք անելով՝ բացեցին երկնային գանձի տապանը, սակայն սուրբ գերեզմանում ոչինչ չգտան՝ բացի պատանքներից: Եվ Աստծուն փառաբանելով՝ հետ դարձան: Պետրոսն ասաց բազմությանը. «Ո՛վ իմ սիրելիներ և հավատակիցներ, դուք, որ ուղիղ փառաբանությամբ դավանում եք ամենօրհնյալ, սուրբ և անբաժանելի Երրորդությունը, ակամջ դրեք իմ բերանի խոսքերին: Վեցթևյան սերովբեները երանելի են, քանի որ մոտ են անհասանելի աստվածությանը: Բազմակնյա քերովբեները բաղձալի են, քանի որ սուրբ Երրորդության կողքին են գտնվում: Քառակերպ կենդանիները երջանկավետ են, քանի որ աթոռն են անհասանելի տերության: Եվ բոլոր զորությունները բաղձալի են, քանի որ սպասավորներն են անժամանակ, գերազանց լույսի: Իսկ սա [Մարիամը] բոլորից առավել մեծ փառքի հասավ և սքանչելի պատվի



արժանացավ, քանզի նրա մեջ բնակվեց անպատմելի Բանն Աստված, մարմին առավ նրա բնությունից և Իր անխառնելի աստվածությունը միավորեց [մարդկային մարմնի] հետ: Եվ եղավ այնպես, որ Աստվածությունը վերցրեց [մարդկային մարմինը] ու օծեց այն, ինչպես որ Օծյալն է»: Եվ ես համարձակվում ու վստահաբար ասում եմ՝ Նա հավասարապես Աստված է՝ կատարյալ աստվածությունից և ամբողջական մարդկությունից: Մեկն է՝ երկու հակադիր բնություններից, որոնցից մեկը՝ [աստվածայինը], աստվածացրեց, իսկ մյուսը՝ [մարդկայինը], աստվածացավ: Մեկ Որդի, մեկ բնություն, մեկ դեմք և մեկ անձ՝ երկու կատարյալ գոյություններից կազմված մեկ կատարյալ գոյություն: Աստված՝ Հորից, և մարդ՝ Կույսից: Անմայր՝ երկնքում, և անհայր՝ երկրի վրա: Հորից անմայր ծնվեց անժամանակ՝ [հավիտենությունից առաջ], և Կույսից անհայր ծնվեց ժամանակի մեջ: Դրա համար նրան Աստվածածին ենք անվանում, քանի որ Աստծո Բանին մարմնով ծնեց, որի շնորհիվ մահը կործանվեց, դժոխքը խորտակվեց, և մահը չէր կարողանում նրան իրեն հնազանդեցնել: Քանզի նրա անարատ կյանքի մեջ մահվան համար ոչ մի հիմք և ճարակ չկար: Այլ [միայն] նախահոր՝ [Ադամի] պարտքի պատճառով նա ճաշակեց մահը՝ մի չնչին ու կարճ ժամանակով, որպեսզի կատարի [Ադամի] պարտքի համար Արարչի սահմանած իրական օրենքը: Եվ այժմ նա մարմնով վերափոխվեց ողջերի երկիրը և դրախտի բաղձալի կենաց ծառի մոտ, ուր կան զանազան ու զանազան հրաշափառ տուներ՝ գեղեցկորեն պճուճված ու զարդափայլ պտուղներով, որոնք տարբեր համեր ու գույներ ունեն: Այնտեղ նաև եղեմածին մշտաբուխ աղբյուրն է հորդում-զվարճանում՝ չորս մասի բաժանված գետերով, որոնք հավերժահոս ընթացքով ոռոգում ու զվարճացնում են դրախտի բաղձալի վայրերը: Եվ անմարմին, սուրբ ու սրբափայլ սերովբեն այլևս փակած չի պահում կենաց ծառի ճանապարհը, որովհետև այսօր [երկինք] տեղափոխվեց երանելի Աստվածածինը՝ հավերժ կենդանի Մայրը, քանզի նա ճաշակեց անմահության բաժակը և միշտ բարեխոսում է աշխարհի համար: Եվ Աստծո փառքի համար սահմանեցին ու հաստատեցին նրա հիշատակի տոնը օգոստոս ամսի տասնհինգին:

Արդ, ո՛վ ամենօրհնյալ Աստվածածին, ես չունեմ ոսկի, արծաթ, կնդրուկ և զմուռս, որ մոգերի հետ միասին գամ քո հրաշափառ ծննդյանը և ընծաներ մատուցեմ քեզ կամ էլ քո անվամբ մի գեղեցկատես տաճար կառուցեմ: Այլ իմ աղքատ ու չքավոր մտքից այս համեստ երաժշտական խոսքերը քեզ կնվիրեմ: [Այս խոսքերը] քեզ հաճելի համարելով՝ ընդունիր և բարեխոսիր ամենքի Տիրոջ առջև, որպեսզի ինձ չզրկի հավիտենական կյանքից, այլ արժանացնի հասնելու [այնտեղ] և անմարմին [հրեշտակների] զորքերի հետ փառաբանելու Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն հավիտյանս հավիտենից:

Մելինե ԳՐԻԳՈՐՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Իսահակ եպս. Պողոսյան. «Հայոց ինքնության արեգակը»

(վիպակ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի մասին)

Միջագետքի ճանապարհին

«Հեղ յիս զգթութիւնդ քո,
Բազումողորմ եւ մարդասէր.
Քանզի քեզ միայնոյ մեղայ,
Ողորմեա՛ ինձ, Աստուած»
(Շարակնոց):

Վաղարշապատում տեղի ունեցած ժողովից կարճ ժամանակ անց, մի առավոտ, երբ վաղորդյան շամանդաղը դեռ չէր հասցրել անէանալ լեռների ճերմակաթույր կատարներից, Մեսրոպ վարդապետն իր հավատարիմ զինակիցների հետ ճանապարհ ընկավ Միջագետք: Եղավ հին աշխարհի գիտական և մշակութային նշանավոր քաղաքներում՝ Եդեսիայում, Ամիդում, Սամոսատում: Աստվածաշնչային Եփրատ ու Տիգրիս գետերի միջև բազմած աշխարհն այստեղ շնչում էր դարերի անդուլ խորքից, բայց և անսահմանորեն հարազատ էր: Գետերի զարկերակը երկիրը վերածել էր այգու, որտեղ արշալույսին արթնացող դաշտերը ծաղկում էին այնպես, ասես հազարավոր տարիներ Աստծու անտես ձեռքը ճշտակատար խնամքով հարթել էր հողի մեջ փորված ակոսները:

Միջագետքն առաջին հայացքից նման էր հին ձեռագրի, որի թանաքը դեռ չի չորացել: Արևն այստեղ ծագում էր պղնձե փայլով՝ լուսավորելով աղյուսակերտ քաղաքների ստվերները: Քամին, բլուրների վրայով անցնելով, իր հետ տանում էր շուկաներից բարձրացող աղմուկն ու սլացող մարտակառքերի թնդյունը: Թվում էր, թե Միջագետքը երբեք չի լռում, այլ պարզապես փոխում է իր ձայնի երանգը:

Այստեղ ողջախոհության և լեզուների մեծարելի գիտակ Դանիել եպիսկոպոսը նրանց ընդունեց բավական ջերմեռանդորեն:

— Վարդապե՛տ,— ասաց նա զրույցի ընթացքում,— քո հանճարի և իմացության փառքը վաղուց արդեն հատել է Հայոց երկրի սահմաններն ու հասել մեզ: Ասա ինձ՝ ինչպե՞ս կարող եմ քեզ օգտակար լինել:

— Ես փնտրում եմ իմ ժողովրդի ապրելու բանալին,— պատասխանեց Մեսրոպը,— որով նա կկարողանա բացել գիտության ու հավատքի դռները:

— Այդ դեպքում դու առաջիկա մի քանի օրերին կծանոթանաս մեր հյուրընկալ երկրին ու բնակիչներին, իսկ դրանից հետո կսկսենք մեր կարևոր ձեռնարկները:

Դանիել եպիսկոպոսը Մեսրոպ վարդապետի հետ շրջեց օրեր շարունակ՝ անհրաժեշտ տեղեկություններ ու գիտելիք փոխանցելով բազում որոշիչ հարցերի ու դրությունների մասին: Այս ընթացքում Մեսրոպ վարդապետի միտքն ու հոգին ավելի զարգացան՝ ըմբռնելով մի շարք կարևոր գիտությունների տարերքը, բայց հաղթանակը դեռ հեռու էր:

Այստեղից նա մեկնեց Եդեսիա: Եդեսիան նրանց դիմավորեց արևի տաք համբույրներով, բազմալեզու մարդկանց խճճանկարով և աշխույժ վաճառատեղիներով: Քաղաքի սրտում տեղակայված հսկա գրադարանում Մեսրոպ վարդապետն ու աշակերտները մեկ անգամ էլ զգացին, թե որքան խորն է գիտության ծովը: Եդեսիայում ունեցած հանդիպումը քաղաքի եպիսկոպոս Բաբիլասի հետ նույնպես բախտորոշ եղավ: Բաբիլասը՝ գիտնական, խոնարհ և լայնամիտ մի մարդ, տեսնելով Մեսրոպի ջանադիր պատրաստակամությունը, ասաց.

— Մեր գրադարանի դռները բաց են քեզ համար: Փնտրի՛ր, քննի՛ր, ուսանի՛ր, որքան և ինչ ուզես:

Մեսրոպ վարդապետը հաճախ էր ժամերով նստում այս կամ այն մագաղաթի առաջ՝ ուսումնասիրելով հին լեզուների գաղտնիքները. պատմական ուղին, հնչյունաբանական, ձևաբանական ու շարահյուսական համակարգերը և առհասարակ նախաստեղծ գրերի կառուցվածքն ու ծագումնաբանությունը: Նույն նպատակով նա եղավ նաև Ամիդում, որտեղ ընդունելություն գտավ Ակակիոս եպիսկոպոսից: Ակակիոսը ևս իր բացառիկ կանոնակարգված մտածողությամբ խոր ազդեցություն թողեց վարդապետի վրա: Նրանք ջերմ ու երկար զրույցներ ունեցան գրչության արվեստի, տառաձևերի, համակարգայնության, սրբազան գրքերի և շատ այլ հարցերի ու խնդիրների մասին:

— Լեզուների հիմքը հնչյունն է,— բացատրում էր Ակակիոսը:— Եթե ուզում ես գիր ստեղծել, պետք է լսես հնչյունների շունչը: Դա համարյա աստվածային ձիրք է: Բայց եթե հաջողես, քեզանից երջանիկ մարդ չի լինի:

Դեռևս Դանիել եպիսկոպոսի հետ ունեցած շփումների ընթացքում Մեսրոպ վարդապետն իմացավ, որ Եդեսիայում ապրում է Պղատոն անունով հայտնի հեթանոս մի ճարտասան, որը ծանոթ է հայերենին: Մեսրոպ վարդապետին հաջողվեց գտնել նրան, սակայն հանդիպումն սպասելի օգտակարություն չբերեց: Այդուհանդերձ, Պղատոնը Մեսրոպին պատմեց, որ ինքն առաջներում մի քաջահմուտ ուսուցիչ է ունեցել՝ եպիփանոս անունով, որը, քրիստոնեություն ընդունելով, ճարտարների գրվածքները Եդեսիայի դիվանից առել է և գնացել: Այդ ժամանակ Մեսրոպը, Բաբիլաս եպիսկոպոսի օգնությամբ, Փյունիկեի վրայով մեկնեց Սամոսատ: Եվ քանի որ Եպիփանոսն արդեն կենդանի չէր և թողնել էր մի աշակերտ՝ Հռոփանոս անունով, որը հրաշալիորեն տիրապետում էր հունարենին, Մեսրոպ վարդապետն այցելեց նրան: Բայց այս դեպքում էլ մնայուն հաջողություն չգտավ: Մեսրոպ վարդապետը հաճախեց տեղի գրադարանները, հանդիպեց հոգևորականության ու ուսուցիչներին և ամենուր մեծ համբավ ունեցավ և հարգանք վայելեց՝ որպես անաննման փնտրտուքով օժտված մի մարդ, որ աշխարհը յուրովի ընկալելու և արժևորելու անսպառ փափագ ու եռանդ ունի: Սամոսատում անցկացրած ժամանակը, ունեցած զրույցներն ու երկար, անքուն գիշերները ի վերջո նրա մեջ ծագեցրին այն լույսը, որը հետագայում բոց էր դառնալու, և որին սպասում էր նա արդեն տարիներ շարունակ:

Քրիստոսի լռությունը Պիղատոսի առջև.
ճշմարտության և իշխանության բախումը

Սկիզբը՝ թիվ 13, 14

Կայսերական գահի և Գողգոթայի խաչի մասին

Դատարանի ներսում տեղի ունեցածն իրականում երկու տեսակ իշխանությունների, երկու տարբեր աշխարհայացքների և երկու գոյաբանական գահերի բախում էր: Մի կողմում կանգնած էր Պիղատոսը՝ Հռոմի կայսեր ներկայացուցիչը, որի իշխանությունը հիմնված էր հարկադրանքի, զենքի զորության, դատապարտելու և կյանքեր խլելու երկրային իրավունքի վրա, մյուս կողմում կանգնած էր շղթայված ու խոշտանգված Նազովրեցին, Որ մարմնավորում էր բացարձակ հոգևոր հեղինակությունը՝ հիմնված սիրո, զոհաբերության և կամավոր խոնարհության վրա: Այս երկխոսության ընթացքում Պիղատոսը փորձում է խոսել իր երկրային դիրքի բարձրությունից՝ ակնկալելով մեղադրյալից սպասվող երկյուղածությունը. «Ինձ հետ չե՞ս խոսում. չգիտե՞ս, որ իշխանություն ունեմ քեզ խաչելու և իշխանություն ունեմ քեզ արձակելու» (Հովհ. ԺԹ 10): Սակայն Քրիստոսի լռությունը, որին հաջորդում է ընդամենը մեկ հաստատուն պատասխան, ամբողջությամբ գլխիվայր է շրջում երկրային իշխանության պատրանքը. «Դու ինձ վրա ոչ մի իշխանություն չէիր ունենա, եթե քեզ վերևից տրված չլիներ» (Հովհ. ԺԹ 11):

Այս վարդապետական հայտարարությամբ և Իր վեհաշուք լռությամբ Քրիստոս ցույց է տալիս, որ Պիղատոսի թվացյալ հզորությունը լոկ ժամանակավոր թույլտվություն է աստվածային Նախախնամությունից: Կայսերական գահը, որին բազմողն ինքն իրեն բացարձակ էր համարում, իրականում սահմանափակ էր ու կախյալ: Քրիստոսի լռությունը ոչ թե Պիղատոսի ատյանի օրինականության ընդունումն էր, այլ դրա սնանկության մերկացումը: Իսկական Իշխանը նա չէր, որ բազմած էր դատավորի աթոռին, այլ Նա, Որ կանգնած էր մեղադրյալի կարգավիճակում և կամավոր կերպով քայլում էր դեպի Խաչը: Ավելին՝ այս դրվագում բացահայտվում է մի հակադրություն. Պիղատոսը հպարտորեն հայտարարում էր, թե ինքն ունի երկրային, մարմնավոր իշխանություն՝ Քրիստոսին խաչելու (դատելու) կամ արձակելու (Հովհ. ԺԹ 10), բայց չէր գիտակցում, որ իսկական, հավիտենական ու փրկագործական իշխանությունը՝ կապելու և արձակելու, պատկանում է միայն իր առջև կանգնած Աստվածորդուն, և հենց այդ բացարձակ հոգևոր իշխանությունը Քրիստոս Իր Հարությունից հետո փոխանցեց Իր առաքյալներին՝ ասելով. «Ճշմարիտ եմ ասում ձեզ. ինչ որ երկրի վրա կապեք, կապված կլինի երկնքում, և ինչ որ երկրի վրա արձակեք, արձակված կլինի նաև երկնքում» (Մատթ. ԺԸ 18, հմմտ. Հովհ. Ի 23): Պիղատոսի երկրային, կայսերական դատարանի իշխանությունը սահմանափակվեց պատմության այդ նեղ դրվագով, մինչդեռ Քրիստոսի հաստատած հոգևոր դատարանը՝ մեղքերն արձակելու և մարդկանց հոգիները կապանքներից ազատագրելու շնորհը, առաքելական հաջորդականությամբ փոխանցվեց Եկեղեցուն և այսօր շարունակում է իրագործվել հոգևորականների միջոցով, որոնք առաքյալներին տրված պատվերների և իշխանության կրողներն են և իրավասու անձինք:

Վերադառնալով Քրիստոսի լռությանը՝ պետք է նշենք, որ դա այն մեծագույն պարադոքսն է, որը հետագայում Պողոս առաքյալը պիտի ձևակերպեր կորնթացիներին ուղղված իր նամակում՝ ասելով. «Որովհետև Աստծո հիմարն ավելի իմաստուն է մարդկանցից, և Աստծո տկարն ավելի զորավոր է մարդկանցից» (Ա Կորնթ. Ա 25): Աշխարհի աչքում Քրիստոսի լռությունն ու խաչելությունը պարտություն էին և տկարություն, սակայն աստվածաբանական մտքի համաձայն՝ դա տիեզերքի ամենահզոր հաղթանակն էր: Գողգոթայի խաչը դարձավ այն հոգևոր գահը, որտեղից Քրիստոս դատեց Իրեն դատող աշխարհիկ համակարգերը: Հարությունից հետո Իր աշակերտներին հայտնվելիս Նա այլևս չի լռում, այլ հաստատում է Իր բացարձակ հաղթանակը երկրային բոլոր կայսրությունների հանդեպ՝ ասելով. «Ինձ տրվեց ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա» (Մատթ. ԻԸ 18): Քրիստոսի լռությունը Պիղատոսի առջև, ուրեմն, ոչ թե նահանջ էր, այլ երկրային իշխանության ամբարտավանությունը կոտրող աստվածային բացարձակ դիվանագիտություն:

Բառի սահմանափակումը և Խոսքի (Լոգոսի) անսահմանությունը

Փիլիսոփայական և աստվածաբանական ամենաանուրբ պարադոքսներից մեկը, որը բացահայտվում է դատարանի պատերի ներսում, մարդկային լեզվի անկատարության և Աստվածային էության անսահմանության բախումն է: Պիղատոսը, լինելով բանական և տրամաբանական աշխարհի ծնունդ, ակնկալում էր բառային պատասխան, որը հնարավոր կլիներ դասակարգել, վերլուծել և սահմանափակել հասկացությունների նեղ շրջանակում, սակայն նա չէր գիտակցում, որ ցանկացած մարդկային բառ, փորձ կատարելով սահմանել Բացարձակը, ոչ թե կբացատրի, այլ կկաղապարի այն: Բառերով տրված պատասխանը կարող է սահմանափակել մարդու միտքը հենց այդ բառերի ու պատասխանի մեջ՝ զրկելով նրան ավելի խոր հայտնության հաղորդակից դառնալու հնարավորությունից:

Քրիստոնեական վարդապետության առանցքը Հովհաննու Ավետարանի նախերգանքն է. «Ի սկզբանե էր Բանը, և Բանը Աստծո մոտ էր, և Բանը Աստված էր» (Հովհ. Ա 1): Քրիստոս Ինքը Մարմնացյալ Խոսքն է: Եվ երբ այս Անսահման Խոսքը կանգնում է երկրային դատավորի առջև ու ընտրում լռությունը, այդ լռությունը դառնում է Նրա ամենախոր ձայնը: Լռելով՝ Քրիստոս ցույց է տալիս, որ Աստվածային Ճշմարտությունը ոչ թե տեղեկատվություն է կամ տեսական գիտելիք, որը պետք է փոխանցել բառերով, այլ հոգևոր Իրականություն, որին պետք է հաղորդակից դառնալ: Ինչպես Հիսուսն Ինքն է զգուշացնում Լեռան քարոզում. «Եվ աղոթելիս շատախոս մի՛ եղեք հեթանոսների նման, որովհետև նրանք կարծում են, թե իրենց շատ խոսքերի համար լսելի կլինեն» (Մատթ. Զ 7):

Աստվածային լռությունը մարդուն առիթ է տալիս իմաստնանալու, քանի որ այն ստեղծում է հոգևոր դատարկ տարածություն, որտեղ մարդկային միտքն ստիպված է լինում ինքնուրույն խորհել, փնտրել և դուրս գալ սեփական կաղապարներից: Ինչպես Ժողովողն է իր իմաստնությամբ նշում. «Ժամանակ կա լռելու և ժամանակ կա խոսելու» (Ժող. Գ 7): Պիղատոսի առջև լռելո՛ւ ժամանակն էր, որովհետև Ճշմարտությունն արդեն իսկ հայտնված էր Քրիստոսի ողջ Էությամբ ու Ներկայությամբ, և որևէ երկրային բառ այլևս ի զորու չէր ավելացնելու կամ պակասեցնելու այդ բացարձակությունը:

Ավագ Շաբաթվա առեղծվածը

«Լռության աստվածաբանության» ամենաշլացուցիչ պարադոքսը բացահայտվում է, երբ համեմատում ենք Աստծո արարչագործությունը Նրա փրկագործության հետ: Աստվածաշնչի առաջին իսկ էջերում տեսնում ենք, որ Աստված տիեզերքը, լույսն ու կյանքը ստեղծում է Իր հնչեղ, ամենակարող Խոսքով. «Եվ Աստված ասաց՝ լո՛ւյս լինի, և լույս եղավ» (Ծննդ. Ա 3): Աստծո խոսքն արարող ուժ է, որը դատարկությունից կյանք է կոչում, սակայն երբ գալիս է մեղքի մեջ ընկած ու մահվան դատապարտված մարդկությանը վերստեղծելու և փրկագործելու ժամանակը, Մարմնացյալ Աստված ընտրում է լիովին հակառակ ճանապարհը: Պիղատոսի առջև Քրիստոսի լռությունը նախերգանքն էր այն տիեզերական մեծագույն լռության, որը պատեց ողջ արարչագործությունը Ավագ Շաբաթ օրը, երբ Կենդանության Աղբյուրը դրվեց գերեզմանում: Ուստի կարող ենք ասել, որ Աստված աշխարհն ստեղծեց Խոսքով, բայց մարդուն փրկագործեց Իր Լռությամբ:

Երբ Հիսուս Խաչի վրա արտասանեց Իր վերջին բառերը՝ «Ամեն ինչ կատարված է» (Հովհ. ԺԹ 30), տիեզերքում տիրեց մի խորհրդավոր անդորր: Այդ լռությունը ոչ թե Աստծո պարտությունն էր, այլ Արարչի հանգիստն Իր կատարած մեծագույն աշխատանքից հետո, ճիշտ այնպես, ինչպես արարչագործության յոթերորդ օրը (հմմտ. Ծննդ. Բ 2): Քրիստոսի լռությունը դատարանում և գերեզմանում իրականում հղի էր Հարության ամենահզոր ավետիսով, և սա մեզ սովորեցնում է մի ցնցող հոգևոր իրողություն. Աստծո լռությունը մեր կյանքում հաճախ այն սրբազան «Ավագ Շաբաթն» է, երբ արտաքնապես ոչինչ չի կատարվում, երբ թվում է, թե ամեն ինչ մեռած է ու լուռ, սակայն հենց այդ լռության խորքում՝ հոգու անտեսանելի խորշերում, Աստված պատրաստում է մեր կյանքի մեծագույն հրաշքը՝ հոգևոր Հարությունը: Աստված լռում է, որովհետև այդ պահին Նա գործում է սրտի ամենախոր շերտերում, որտեղ բառերն այլևս անզոր են:

Այս աստվածաբանական խորհուրդը հասկանալու համար պետք է թափանցենք քրիստոնեական դավանաբանության ամենանվիրական շերտերը, որտեղ Աստծո Խոսքը (Լոգոսը) և Աստծո Լռությունը հանդես են գալիս ոչ թե որպես հակադրություններ, այլ որպես նույն աստվածային սիրո երկու տարբեր դրսևորումներ: Վարդապետական մտքի հսկաները, ինչպիսիք են Սուրբ Իգնատիոս Անտիոքացին կամ Սուրբ Մաքսիմոս Խոստովանողը, հաճախ են շեշտում, որ Քրիստոս հենց «Լռությունից բխած Խոսքն է»: Սա նշանակում է, որ աստվածային հայտնությունը պատմության մեջ ունի, այսպես ասած, իր արագության աստիճանը, որտեղ լռելն ունի նույնքան արարչագործական և փրկագործական զորություն, որքան խոսելը: Երբ մենք նայում ենք Հին Կտակարանին, տեսնում ենք, որ Աստծո Խոսքը պատռում է չգոյության մթությունը. «Նա ասաց, և նրանք եղան. Նա հրամայեց, և նրանք հաստատվեցին» (Սաղմ. ՃԽԸ 5): Այստեղ Աստծո ձայնը հզոր է, տարերային և ստեղծագործ, սակայն մարդու մեղսագործությունից հետո արարչագործությունը վիրավորվեց, իսկ մարդկային լեզուն ապականվեց: Մարդը սկսեց բառերն օգտագործել ստի, կեղծիքի և սեփական մեղքն արդարացնելու համար, ճիշտ այնպես, ինչպես Ադամը դրախտում փորձեց բառերով իր մեղքը բարդել Եվայի ու Աստծո վրա: Ուստի մարդուն վերստեղծելու համար Աստծո Խոսքը պիտի գար և սրբագործեր նաև լռությունը:

Քրիստոսի լռությունը Պիղատոսի, Կայիափայի և հռոմեական զինվորների հեգնական աղաղակների ներքո այն սրբազան տարածքն էր, որտեղ Մարմնացյալ Աստված Իր վրա էր վերցնում մարդկային դատարկ ու հպարտ շատախոսության պատիժը: Երբ մարգարեն ասում է. «Այնպես իր բերանը չբացեց» (Եսայի ԾԳ 7), նա նկարագրում է Քրիստոսի կամավոր ընտրությունը՝ թույլ տալ, որ աշխարհի ողջ մեղքն ու աղմուկը բախվեն Իր աստվածային լռության անսասան ժայռին և հալչեն դրա մեջ: Սա կրավորական, անգործունյա լռություն չէր, որ բնորոշ է վախեցած կամ անզոր մարդուն, սա այն զորավոր, ստեղծագործ լռությունն էր, որով Քրիստոս քանդեց մահվան հիմքերը: Այս իրողությունը կատարյալ կերպով արտահայտված է Եկեղեցու Ավագ Շաբաթվա խորհրդաբանության մեջ: Շաբաթ օրը՝ հանգստի օրը, երբ Քրիստոս մարմնով գերեզմանում էր, իսկ հոգով՝ լծված դժոխքի ավերման գործին, տիեզերքում տիրում էր մի ցնցող անդորր: Եվ այդժամ աշխարհի երեսին տիրեց մեծ լռություն, որովհետև Թագավորը ննջում էր: Այս տիեզերական լռությունը հղի էր պատմության ամենամեծ շրջադարձով: Ինչպես հացահատիկն է հողի մութ ու լուռ խորքում մահանում, որպեսզի նոր ու առատ կյանք տա (հմմտ. Հովհ. ԺԲ 24), այնպես էլ Քրիստոսի լռությունը գերեզմանում պատրաստում էր Հարության ճառագայթումը: Ժամանակակից հավատացյալի համար սա հոգևոր մեծագույն դաստիարակություն է: Մեր կյանքի այն շրջաններում, երբ մեզ թվում է, թե Աստված լռում է, երբ մեր աղոթքներին չեն հաջորդում ակնթարթային պատասխաններ, և երբ երկինքը մեզ համար թվում է փակված, իրականում յուրաքանչյուրս այդժամ ապրում ենք մեր հոգևոր ու հերթական Ավագ Շաբաթը: Այդ պահերին Աստված մեզ հրավիրում է դուրս գալու մակերեսային հավատքի սահմաններից: Նա մեզ սովորեցնում է, որ Իր ներկայությունը պետք չէ փնտրել միայն զգացական աղմուկի, տեսանելի հրաշքների կամ արտաքին հաջողությունների մեջ:

Աստծո լռությունը հաճախ Նրա ամենախոր վիրահատությունն է մեր հոգու վրա. ճիշտ այնպես, ինչպես բժիշկն է լռում ամենապատասխանատու վիրահատության պահին՝ կենտրոնացնելով իր ողջ ուժն ու խնամքը, այնպես էլ Արարիչը, երբեմն լռելով մեր կյանքում, իրականում կատարում է մեր սրտերի ամենաանուրբ փոխակերպումը: Նա լռում է, որ մենք սովորենք լսել Իր ձայնը ոչ թե աշխարհի փոթորիկների մեջ, այլ մեր ներսում՝ Սուրբ Հոգու մեղմ ու բարակ քամու ձայնի նման (հմմտ. Գ Թագ. ԺԹ 12): Ուստի Քրիստոսի լռությունը դատարանում և գերեզմանում մեզ պատգամում է, որ Աստծո լռությանը պետք չէ պատասխանել հուսահատությամբ կամ կասկածով, այլ սրբազան ակնածանքով և հաստատուն հավատքով, որովհետև այդ լռությանը հաջորդող քայլը լինելու է հաղթական ու լուսավոր Հարությունը:

Աստվածաշնչյան դրվագը, որտեղ Քրիստոս լռում է Պիղատոսի՝ «Ի՞նչ է ճշմարտությունը» հարցին ի պատասխան, պատմական հեռավոր մի իրադարձություն չէ, այլ յուրաքանչյուր մարդու հոգում ընթացող մշտական ընտրություն: Ընտրություն երկրային իշխանության աղմուկի և աստվածային ճշմարտության անդորրի միջև: Պիղատոսի դատարանը մարմնավորում է այն աշխարհը, որը փորձում է Աստծուն կաղապարել սեփական կանոնների, հարաբերական պատկերացումների և քաղաքական նպատակահարմարությունների մեջ, սակայն Քրիստոսի վեհաշուք ու հնչեղ լռությունը ջախջախում է երկրային հպարտության բոլոր պատնեշները՝ ցույց տալով, որ Աստվածային Ճշմարտությունն ինքնաբավ է և կարիք չունի մարդկային վավերացման:

Մարդկային կյանքեր փոխող ամենամեծ բացահայտումն այն է, որ Աստծո լռությունը երբեք Նրա անտարբերությունը կամ անտեսումը չէ: Այն, ինչ մենք թյուրիմացաբար ընկալում ենք որպես երկնքի լռություն, իրականում Նրա սիրո, հանդուրժողության և մեզ հասունացնելու ամենախոր ձևն է: Աստված չի լռում: Նա բացարձակ կերպով խոսել է Իր Որդու միջոցով և այսօր էլ շարունակում է անդադար, կենդանի ու զորավոր կերպով խոսել Սուրբ Գրքի՝ Աստվածաշնչի միջոցով:

Երբ կյանքի փոթորիկներն ու աշխարհի անարդարությունները մեզ լցնում են հուսահատությամբ, և թվում է, թե երկինքը պապանձվել է, մենք կոչված չենք Պիղատոսի պես հեգնանքով հարցնելու՝ «Ի՞նչ է ճշմարտությունը»: Մենք պարզապես պետք է խոնարհությամբ բացենք Աստվածաշունչը, լռենք Նրա ներկայության մեջ և թույլ տանք, որ Նրա կենդանի Խոսքը դառնա ճրագ մեր ոտքերի համար: Այդ ժամանակ միայն՝ երկրային աղմուկի թոթափումից հետո, մեր հոգիներում լուռ կհնչի Փրկչի հավիտենական ու ազատագրող խոստումը. «Եվ կճանաչեք ճշմարտությունը, և ճշմարտությունը կազատի ձեզ» (Հովհ. Ը 32):

ՀՈՎՀԱՆՆԵՍ սրկ. ԷՎԻՆՅԱՆ
ԴԻԱՆԱ ՔՈՉԱՐՅԱՆ

Բեռլինի վեհաժողովը և Հայկական հարցը

1878 թ. հունիս-հուլիս ամիսներին մեծ տերությունների ղեկավարները հավաքվել էին Գերմանիայում՝ մայրաքաղաք Բեռլինում՝ քննելու հերթական ռուս-թուրքական պատերազմից հետո ստեղծված իրավիճակը: Հայ ժողովուրդը մեծ հույսեր էր կապում այս վեհաժողովի հետ՝ ակնկալելով ի վերջո հասնել Հայկական հարցի լուծմանը՝ բարենորոգումների կամ ինքնավարություն ստանալու տարբերակով:

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ավարտվել էր ռուսական զորքերի փայլուն հաղթանակով: 1878 թ. փետրվարի 19-ին Սան Ստեֆանոյում կնքվել էր հաշտության պայմանագիրը, որով Ռուսաստանի դիրքերն ամրապնդվում էին ինչպես Կովկասում, այնպես էլ Բալկաններում: Սա հակասում էր Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի շահերին: Եվ ահա այս երկու տերությունները, սպառնալով Ռուսաստանին նոր պատերազմով, նոր վեհաժողով պահանջեցին՝ քննարկելու Սան Ստեֆանոյի պայմանագրի վիճահարույց կետերը:

Բեռլինում հրավիրվելիք վեհաժողովը մեծ աշխուժություն առաջացրեց հայ հասարակական շրջանակներում: Ամենուր խոսում էին Հայաստանի ինքնավարության մասին: Ավելի համարձակները անկախ Հայաստանի ծրագրեր էին մշակում: Պոլսի հայ քաղաքական շրջանակները ձգտում էին Բեռլինի վեհաժողովի մասնակից եվրոպական տերությունների ուշադրությունը հրավիրելու Հայկական հարցի ու Օսմանյան կայսրությունում հայերի ծանր կացության վրա և հասնելու հայկական բարենորոգումների իրականացմանը, որ նախատեսված էր Սան Ստեֆանոյի պայմանագրով: Պատրիարք Ներսես Վարժապետյանի նախաձեռնությամբ Բեռլին գործուղվեց ազգային պատվիրակություն, որը ոչ միայն պետք է պաշտպաներ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, այլև ավելի նպաստավոր պայմաններ պահանջեր արևմտահայերի համար: Պոլսի Հայոց պատրիարքարանի կազմած ծրագրում նախատեսվում էր վարչական ինքնավարություն Արևմտյան Հայաստանի համար:

Ազգային գործիչ Գրիգոր Օտյանի առաջարկությամբ Եվրոպա մեկնող պատվիրակությունը գլխավորեց ողջ հայության շրջանում մեծ հեղինակություն վայելող Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմյանը: Պատվիրակության կազմում էին Մինաս Չերազը, Ստեփան Փափազյանը և Խորեն Նարբեյը:

Հայ պատվիրակները եղան Իտալիայում և Ֆրանսիայում, հանդիպեցին այդ երկրների արտգործնախարարների հետ և ստացան որոշ հուսադրող խոստումներ: Լոնդոնում Ջեյմս Բրայսի գլխավորած հայասիրական ուժերը, ի պաշտպանություն Հայկական հարցի, մեծ հանրահավաք կազմակերպեցին: Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Սոլսբերին, սակայն, Խրիմյանին և Չերազին տվեց խուսափողական պատասխաններ:

Քաղաքական խարդավանքներից հեռու կանգնած հայ պատվիրակները չգիտեին, որ անգլիական դիվանագիտությունն արդեն լուրջ աշխատանք էր կատարել վեհաժողովում թուրքերի շահերը պաշտպանելու ուղղությամբ: 1878 թ. մայիսի 18-ին Լոնդոնում կնքվել էր ռուս-անգլիական համաձայնագիր, որը նախատեսում էր Սան Ստեֆանոյի պայմանագրի մի շարք կետերի վերանայում: Դրանք վերաբերում էին նաև Հայկական հարցին: Անգլիացիները լուրջ հաջողության հասան նաև Բարձր Դռան հետ հարաբերություններում: Վեհաժողովի նախօրյակին՝ մայիսի 25-ին կնքված անգլո-թուրքական գաղտնի համաձայնագրով Մեծ Բրիտանիան Թուրքիայից ստացավ Կիպրոս կղզին՝ փոխարենը խոստանալով պաշտպանել թուրքական պահանջները: 1878 թ. հունիսի 1-ին Բեռլինում սկսված վեհաժողովն ընթանում է Մեծ Բրիտանիայի մշակած սցենարով:

Խորեն Նարբեյը Պետերբուրգում Ալեքսանդր Երկրորդ կայսրին Հայաստանի ինքնավարության ծրագիրը հանձնելուց հետո մեկնեց Բեռլին և միացավ Խրիմյանին ու Չերազին: Սակայն հայկական պատվիրակությանը թույլ չտրվեց մասնակցել Բեռլինի վեհաժողովի աշխատանքներին: Պատվիրակությունը մեծ դժվարությամբ կոնգրեսին ներկայացրեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության նախագիծն ու եվրոպական մեծ տերություններին ուղղված հուշագիր, որոնք մատնվեցին անուշադրության:

Համաձայն հայկական հուշագրի՝ հայկական գավառները պետք է միավորվեին մեկ ընդհանուր նահանգի մեջ, որը ղեկավարվելու էր քրիստոնյա կառավարչի կողմից հինգ տարի ժամկետով: Նահանգապետն օժտված էր լինելու գործադիր իշխանությամբ և կարող էր պաշտոնանկ արվել միայն տերությունների համաձայնությամբ: Հայկական նահանգի հարկերից ստացվող եկամտի 20 %-ը տրվելու էր ֆինանսների նախարարությանը, իսկ մնացած 80 %-ը պետք է հատկացվեր լուսավորության, առողջապահության, ճանապարհաշինության և տնտեսության զարգացման կարիքներին: Սահմանվելու էր դավանանքի ազատություն, կազմվելու էին քրեական և քաղաքացիական նոր օրենսգրքեր: Վարչական և դատական հիմնարկներում պետք է ապահովվեր քրիստոնյաների և մահմեդականների հավասարաչափ մասնակցության իրավունքը: Հայերենը թուրքերենին հավասարաչափ գործածության մեջ էր դրվելու դատական և վարչական հիմնարկներում և դառնալու էր պաշտոնական լեզու: Քրդական ու չերքեզական հրոսակախմբերը զինաթափվելու էին, իսկ նրանց ասպատակությունների դեմ պայքարելու համար ստեղծվելու էին տեղական ոստիկանական ուժեր՝ եվրոպացի սպայի հրամանատարության ներքո: Նշված բարենորոգումները կիրառելու և վերահսկելու պատասխանատվությունը դրվելու էր միջազգային հանձնախմբի վրա:

Ակներև է, որ հայկական հուշագրով չէր դրվում Օսմանյան կայսրությունից Արևմտյան Հայաստանի անջատման կամ Ռուսաստանին միացվելու հարցը, այլ առաջ էր քաշվում միայն բարենորոգումների խնդիր: Ծրագրին կցված տեղեկագիրը պարունակում էր Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ հավաստի վիճակագրություն: Դրա համաձայն՝ կայսրության 3 մլն հայերից Արևմտյան Հայաստանում բնակվում էր 1 մլն 330 հազարը: Նույն տարածքում թուրքերի թիվը կազմում էր 530 հզր, քրդերինը՝ 120 հզր: Եվս 82 հազարն այլ ազգերի ներկայացուցիչներ էին: Փաստորեն, հայերն Արևմտյան Հայաստանում կազմում էին բացարձակ մեծամասնություն:

Ի վերջո, վեհաժողովն ընդունեց Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի անգլիական խմբագրությունը, որը, որպես 61-րդ հոդված, մտավ Բեռլինի դաշնագրի մեջ հետևյալ ձևակերպմամբ. «Բարձր Դուռը հանձն է առնում հայաբնակ վայրերում անհապաղ իրագործել տեղական կարիքներից բխող բարելավումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին Բարձր Դուռը պարտավոր է պարբերաբար հաղորդել պետություններին, որոնք պետք է հսկեն դրանց գործադրությանը»:

Այսպիսով՝ հայկական բարենորոգումների իրագործման քիչ թե շատ իրական երաշխիքը՝ հայկական նահանգներում ռուսական զորքերի առկայությունը, փոխարինվում էր եվրոպական մեծ տերությունների՝ բարենորոգումները վերահսկելու ոչ իրական հավաքական երաշխավորությամբ: Հատկանշական է, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածում Հայաստան անվանումն այլևս չէր հիշատակվում: Փոխարենը գործածվում էր «հայաբնակ մարզեր» անորոշ արտահայտությունը: Իսկ թե որո՛նք էին այդ մարզերը և ի՛նչ բնույթի էին լինելու բարենորոգումները, ոչինչ չէր ասվում: Բեռլինի դաշնագրով Հայկական հարցն Օսմանյան կայսրության ներքին հարցից փաստորեն վերածվեց միջազգային հարցի՝ դառնալով եվրոպական մեծ տերությունների շահադիտական քաղաքականության ու միջազգային դիվանագիտության չարաշահման առարկա, որը խիստ ծանր հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար:




Վեհաժողովի որոշումները խոր հիասթափություն առաջացրին հայության շրջանում: Խրիմյանն ու Չերազը վեհաժողովի աշխատանքների վերջին օրը՝ հուլիսի 1-ին, բողոք ներկայացրին մեծ տերություններին: Խրիմյան Հայրիկը վեհաժողովը պատկերավոր նմանեցրեց հարիսայի ճաշկերույթի, որին երկաթե շերեփով ներկայացած մասնակիցները կարողանում էին տանել իրենց բաժինը: Բայց քանի որ ինքը միայն «թղթե շերեփ ուներ, այն մնաց հարիսայի մեջ», և ինքը ստիպված էր ձեռնունայն վերադառնալ:

Բեռլինի վեհաժողովը «սառը ցնցուղ» էր հայության համար: Խրիմյանը և բազմաթիվ գործիչներ Բեռլինից հետո հասկացան, որ օտար տերությունների հետ իրենց հույսերը կապելու փոխարեն անհրաժեշտ է կազմակերպել սեփական ժողովրդի զինված ազատագրական պայքարը: Խրիմյան Հայրիկը կոչ արեց հայությանը. «Ձեր բարեկամաց և ազգականաց իբրև պարգև մէկ-մէկ զէնք տարէք, զէնք առէք և դարձեալ զէնք: Ժողովուրդ, ամենէն առաջ քո ազատութեան յոյսը քո վրայ դիր, քո խելքին և բազկին ոյժ տուր»:

Եվ Հայրիկի դասերն արդիական են նաև այսօր...

Շուշան Իսրայելյան



Մայորի կոչումով դպիրը

Զինվորականի ուսադիրներով, հոգևորականի սրտով

Կիրակի է: Ստեփանավանի Սուրբ Սարգիս եկեղեցու զանգերն արդեն ղողանջել են. Պատարագ է: Գրիշան ծառայությունից ազատ կիրակիներին զինվորական համազգեստը խնամքով փոխարինում է դպիրի շապիկով ու անցնում մյուս նվիրական ծառայությանը՝ ապահովելու եկեղեցական արարողությունների, Սուրբ Պատարագի և ժամերգությունների բնականոն ընթացքը:

Չէ, մանկության տարիներին Գրիշան կրոնական կրթություն չի ստացել: Հայրենի Վահագնի գյուղում ո՛չ եկեղեցի կար, ո՛չ էլ հոգևորական. միակ աղոթատեղին գյուղից հեռու մի մատուռ էր, որտեղ տարին մեկ-երկու անգամ գնում էին մատաղ անելու, ինչն էլ, իր բուն խորհրդից շեղվելով, ամեն անգամ կերուխումի էր վերածվում:

Սակայն դպրոցում ընկեր Ավագյանի՝ «Հայոց եկեղեցու պատմության» ուսուցչուհու գցած սերմերը սկսել էին կամաց-կամաց ծիլեր տալ պատանի Գրիշայի սրտում: Սանկտ Պետերբուրգում ուսանելու տարիներին նա արդեն մշտապես հաճախում էր Սուրբ Կատարինե հայկական եկեղեցին, իսկ վերադարձը հայրենիք երիտասարդ սպայի քրիստոնեական կյանքում շրջադարձային եղավ. այստեղ նա ծանոթացավ Ստեփանավանի հոգևոր հովվի՝ տեր Մամբրե քահանա Ոսկանյանի հետ:

«Տեր հոր հետ զրույցները, ուղղորդումները և պատարագներին իմ մասնակցությունն օգնեցին գտնել կյանքի ճշմարտությունը, որն Աստծու փառքին ծառայելն է: Իսկ երբ 2023-ին առաջին անգամ խորան բարձրացա, մի ուրիշ՝ աննկարագրելի զգացողություն ունեցա, որ երբևէ չէի զգացել», — նշում է Գրիշան ու ջերմեռանդությամբ տողեր մեջբերումներ Սուրբ Գրքից, ապա ցույց է տալիս տեր հոր նվիրած և տարիներ շարունակ խնամքով ու սրբությամբ պահպանվող պատարագամատույցը:

Գրիշան համոզված է՝ հոգևոր արժեքների մեջ խորամուխ լինելն իրեն՝ որպես ավագ սպայի, միայն ուժեղացնում է: Զինվորական ծառայության մեջ խստապահանջ, ուսուցանող և միաժամանակ մարդկային լինելու սկզբունքները նա կարողանում է լավագույնս ներդաշնակեցնել հոգևոր արժեքներին: Դրանց հաղորդակից լինելը ոչ թե հակադրվում է նրա զինվորական կոչմանը, այլ լրացնում է այն: Ավելին՝ հավատքն օգնում է պահպանել սպայի համար հատկապես կարևոր սկզբունքները, որոնք հատկապես կարևոր են հրամանատարի համար՝ խստապահանջության մեջ չկորցնել մարդասիրությունը, պահանջկոտ լինել՝ առանց նվաստացնելու, առաջնորդել՝ առանց սեփական օրինակը մոռանալու: Եվ այստեղ Գրիշան վերհիշում է քաղվածքներ իր սիրած գրքից՝ Նիկոլայ Սերբացու «Պատերազմ և Աստվածաշունչ» աշխատությունից. «Պատերազմի ժամանակ հաղթանակներ են տանում նրանք, ովքեր կենդանի Աստծուն ունեն որպես զինանշան», «Ինչքան բարձր է զինծառայողի կոչումն ու պաշտոնը, այնքան ավելի է նրա մեղքը խանգարում իր բանակի հաղթանակին»: Ապա երիտասարդ սպան հավելում է սուրբգրային հայտնի տողերը. «Մի՛ վախեցեք և մի՛ զարհուրեք այս մեծ բազմությունից, որովհետև պատերազմը ձերը չէ, այլ՝ Աստծունը» (Բ Մնացորդաց Ի 15):

Գրիշան երջանկության իր բանաձևն ունի՝ «Հայրենիք, Աստված և Ընտանիք»: Համոզված է՝ ընտանիքում սիրո և համերաշխության պահպանման գործում էլ է կարևոր հոգևոր միասնականությունը: Այդ պատճառով էլ ավագ դստեր ձեռքը բռնած՝ հաճախում է եկեղեցի: Կրտսեր դուստրը դեռ փոքր է, բայց հայրիկը վստահ է՝ հավատքի առաջին դասերը հենց ընտանեկան օջախում են տրվում:

Այսպես կիրակիից կիրակի զինվորական համազգեստը փոխարինվում է դպրի շապիկով, բայց այդ երկուսը չեն հակադրվում իրար. փոխվում է միայն ծառայության վայրը. անփոփոխ է մնում նվիրումը:

Մարուսյա ԲԱԼԱՅԱՆ

Հայերենը՝ որպես աղոթքի լեզու

Կա միջնադարյան մի աշխարհ՝ մի ժանր, որտեղ լեզուն մեր առջև հառնում է ոչ թե իբրև հաղորդակցման պարզ միջոց, այլ որպես հոգևոր ակտ, որպես սրբազան գործողություն: Խոսքը հայ աղոթագրության մասին է:

Կանոնական աղոթագրության, հատկապես Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու աղոթքների լեզուն մի բացառիկ դաշտ է, որտեղ «համբուրվում» են քերականությունն ու աստվածաբանությունը, միաձուլվում են բառն ու մարդկային ներաշխարհը:

Միջնադարյան աղոթքի բառապաշարը կոչված էր անելու անհնարինը՝ նկարագրելու աննկարագրելին՝ Աստծուն, և արտահայտելու անարտահայտելին (մարդկային հոգու խորությունը):

Հանկարծագյուտ բառեր

Նարեկացու մատյանը լի է ինքնաստեղծ, հանկարծագյուտ բարդություններով և ածանցումներով, որոնք միտված են ցույց տալու Աստծու բացարձակությունը կամ մի հոգևոր իրողության վեհությունը՝ *անսկիզբն, անեղանելի, ամենաստեղծ, անպարագրելի, աստվածակիր, երկնառաք, խորհրդակիր, խնկապատար, լուսանյութ:* Ի դեպ, Աստծուն բնորոշելու համար միջնադարյան հեղինակները հաճախ ոչ թե սահմանել են այն, ինչ նա *է* (այդպիսի սահմանումը համարել են անկարելի), այլ այն, ինչ նա *չէ*. այստեղից էլ «ան-» ժխտական նախածանցի այդքան հաճախադեպ կիրառությունը՝ *անսկիզբն, անեղանելի, անստեղծ, անպարագրելի* և այլն:

Հոմանիշների տարափ

Աղոթողը միտումնավոր օգտագործում է տասնյակ բառեր նույն իմաստային դաշտից, նա բառացիորեն սպառում է մարդկային լեզվի հնարավորությունները՝ ճգնելով ավելի ու ավելի խոր ու բազմաշերտ արտահայտելու այս կամ այն հոգեվիճակը: Մեղքը նկարագրելիս բառապաշարը դառնում է մութ ու ծանր, իսկ փրկությունը նկարագրելիս՝ լուսավոր ու եթերային:

Անշաղկապ կապակցություն (ասինդետոն):

Շաղկապների բացակայությունը ստեղծում է շնչահեղձության, շտապողականության և խոսքի անընդհատության զգացում: Բառերը միմյանց հաջորդում են հեղեղի պես. *«Տէր իմ, Տէր, տուիչ պարգեւաց, ինքնաբուն բարի, ամենից տիրող հաւասարապէս, միայն արարիչ բնաւից յոչէից, փառաւորեալ, անքնին, աներ, աներկու, սոսկալի, հզաւր, սաստիկ, անտանելի, անմերձենալի, անըմբռնելի, անիմանալի, անճառելի, անտեսանելի, անզննելի, անշոշափելի, անորոնելի, անսկիզբն, անժամանակ...»* (Նարեկացի, Բան Գ):

Վերջակրկնություն (էպիֆորա)

Նույն կառույցի կամ բառի պարբերական կրկնությունը աղոթքին հաղորդում է խորհրդավոր մի կշռույթ: Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»-ը սրա փայլուն օրինակն է: Այդ աղոթքում յուրաքանչյուր տուն ավարտվում է նույն կաղապարով. *«Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս»:* Այսպես ամբողջական աղոթքը դառնում է մի կուռ ճարտարապետական կառույց:

Խոսքի ներքին ուժականությունը

Միջնադարյան մտածողության մեջ բառը ստվեր կամ պիտակ չէր. այն ինքնին ակտ էր: Աղոթքի լեզուն օժտված է աներեի ներքին ուժականությամբ: Երբ Նարեկացին գրում է, նա չի պատմում իր զղջման մասին, այլ բառով *իրագործում է* այդ զղջումը:

Խոսքի էներգիան ճառագում է բաղաձայնույթներից (ալիտերացիա) և առոգանությունից. հնչյունների կուտակումը բառացիորեն վերարտադրում է հոգու կանչը.

Գոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից.
Ի վեր ի վերայ վարսիցն
Ծաւալէր ծաղիկ ծովային:



Բևեռների միասնությունը

Բառերի խոնարհությունն ու «ճիչը» նույն տեղում. սա միջնադարյան աղոթքի ամենացնցող հակասությունն է, որն ուղղակիորեն առնչվում է տեքստի կառուցման վարպետությանը:

Մի կողմից՝ աղոթողը բառերով իրեն հավասարեցնում է հողին: Լեզուն ծայրահեղ խոնարհ է, ինքնաոչնչացնող: Հեղինակն իրեն անվանում է «շուն սատկած», «անօթ խեցեղէն», «հող եւ մոխիր», «անառակ», «ապիկար», «մահագործ», «վրիպեալ», «կրկնամեռ»: Բայց մյուս կողմից՝ հենց այս խոնարհությունը արտահայտվում է լեզվական այնպիսի հզորությամբ, հույզերի այնպիսի հորձանքով, որ վերածվում է տիեզերական ճիչի:

Ուշադրություն դարձրեք հակադրությանը. բովանդակությունը ասում է. «Ես չնչին եմ, մեղավոր ու պապանձված», իսկ լեզուն (ոճը, շարահյուսությունը, հնչյունաբանությունը) աղաղակում է՝ ստեղծելով գեղարվեստական կոթող, որը ճեղքում է երկինքը:

Այս երկվությունը՝ զրոյացման ձգտող բովանդակությունը և աստվածայինին հասնող լեզվական հզորությունը, ձևավորում է այն բացառիկ լարվածությունը, որը դարեր շարունակ կենդանի է պահում միջնադարյան աղոթքը:

Անթերի լեզուն միայն քերականական կանոնների պահպանումը չէ: Միջնադարյան հայ աղոթքը ապացուցում է, որ երբ լեզուն գոյաբանական ծանրություն է ունենում, շարահյուսական «անոմալիաներն» ու բառակազմական ծայրահեղությունները ոչ թե սխալներ են, այլ հոգու թելադրանք: Տեքստը դառնում է կենդանի օրգանիզմ, որտեղ ամեն մի վանկ ունի իր շնչառությունը՝ միաժամանակ և՛ խոնարհ, և՛ սրտակեղեք:

Նշան Աբասյան

Բլեզ Պասկալը՝ աշխարհահռչակ գիտնականն ու Աստծո այրը

Ֆրանսիացի մաթեմատիկոս, ֆիզիկոս, գյուտարար, կրոնափիլիսոփա և քրիստոնյա գրող Բլեզ Պասկալը (1623–1662 թթ.) անջնջելի հետք է թողել գիտության և քրիստոնեության անդաստաններում: Բացառապես ինքնակրթությամբ ձևավորված պատանին 16 տարեկանում շարադրում է իր առաջին մաթեմատիկական աշխատությունը՝ «Կոնական հատույթների տեսության փորձը» (հայտնի է որպես «Պասկալի թեորեմ»): Իսկ 19 տարեկանում ստեղծում է աշխարհում առաջին հաշվիչ մեքենան՝ «Պասկալինան»՝ հարկահավաք հոր՝ Էտիեն Պասկալի ամենօրյա չարչարանքները մեղմելու նպատակով: Մեքենան, սակայն, ծախսատար էր և մեծ տարածում չգտավ: Համենայն դեպս դա առաջին փորձն էր այդ ոլորտում: Պասկալը դասական հիդրոստատիկայի հիմնադիրներից է. նա բացահայտեց, որ հեղուկի մակերևույթին արտաքին ուժերի գործադրած ճնշումը հեղուկը հավասարապես հաղորդում է բոլոր ուղղություններով: Այդ օրենքի վրա է խարսխված հիդրավլիկական մամլիչների, արգելակների և այլ հիդրոստատիկական մեքենաների գործողությունը: Պակաս կարևոր չեն նրա՝ թվաբանությանը, հանրահաշվին, թվերի տեսությանը նվիրված աշխատությունները ու գյուտերը, օրինակ՝ երկանդամյան գործակիցների հաշվման եղանակը (հայտնի է որպես «Պասկալի եռանկյուն»):



Բլեզ Պասկալը մանկուց աչքի է ընկել անմնացորդ սիրով առ Աստված, առ Հիսուս Քրիստոս, առ Ատվածաշունչ մատյանը, որը թեև սբ Գրիգոր Նարեկացու պես անգիր է իմացել, բայց մինչև կյանքի վերջ երկյուղածությամբ շարունակաբար ընթերցել է՝ երբեք իր ժամանակակիցներից շատերի նման կասկածի տակ չառնելով նրա աստվածաշնչականությունը:

Մի անգամ Պասկալին կառքով տեղափոխող ձիերը սկսում են անկառավարելի սլանալ և կառքից պոկվելով՝ ընկնում են գետնի սատկում, սակայն Պասկալը առանց որևէ վնասվածքի, ողջ-առողջ մնում է կամրջից հրաշքով կախված կառքում: Հասկանալով, որ Աստված է իրեն փրկել անխուսափելի մահից՝ նա վերանայում է իր կյանքը, հեռանում գիտությունից և միմիայն մի երազանք փայփայում՝ ծառայել մարդկանց՝ նրանց սրտերն առ Փրկիչն ուղղելով: 1655 թվականից նա կիսով չափ ճգնավորական կյանք է վարում Պոր-Ռոյալ մենաստանում, որտեղ իշխում էր յանսենական գաղափարախոսությունը: Այդ մենաստանի միաբանները անհաշտ պայքար էին մղում ճիզվիտական կազուիստիկայի՝ կեղծ փաստաբանության դեմ: 1657 թ. Պասկալն այդ նպատակով գրում է «Նամակներ մի գավառացու» պամֆլետը՝ ֆրանսիական երգիծաբանության գլուխգործոցը: Նա քանիցս իր բարեկամներին խոստովանել էր, որ կամենում է քրիստոնեական կրոնի ջատագովությանը նվիրված մի աշխատություն գրել, ինչը սկսեց, բայց, ցավոք, գործն անավարտ մնաց: Սակայն Պասկալից մեզ հասած հարյուրավոր ասույթներում, որոնք հետագայում հրատարակվեցին մեկ ժողովածուով («Խորհրդածություններ կրոնի և այլ առարկաների շուրջ»), վաղամեռիկ հեղինակը բարձրացնում է էկզիստենցիալիզմին, մահկանացու մարդու հակասականությանը, ողբերգականությանը, մարդու և Աստծու փոխհարաբերություններին, ճանաչողության միջոցներին՝ բանականությանն ու սրտին, և առհասարակ հոգևոր կյանքի ամենատարբեր կողմերին առնչվող հարցեր: Նա պաշտպանում է հավատքի իսկությունն իր դարին բնորոշ աթեիզմից, ազատամտությունից, սկեպտիցիզմից և բանականության առարկություններից: Բազմաթիվ լեզուներով թարգմանված այդ գրքին՝ այսօր էլ նույնքան արդիական, հետաքրքիր և ուսանելի, վիճակված էր դառնալու ոչ միայն ֆրանսիական, այլև համաշխարհային մշակույթի գլուխգործոցներից մեկը:

Պասկալի մահից հետո քույրը նրա վերնազգեստում՝ սրտի մոտ ներկարված մագաղաթե մի կտորի վրա, նրա իսկ ձեռքով արված մի գրառում է հայտնաբերում՝ հանճարեղ գիտնականի անձնական հավատամքի վկայությունը. «Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը, Հակոբի Աստվածը, այլ ոչ թե գիտնականների և փիլիսոփաների Աստվածը... Եվ թող չմոռանամ պատգամները Քո. ամեն»:

Բլեզ Պասկալի ասույթներից

Մենք ձգտում ենք լցնելու մեզ տվայտող դատարկությունը բազում տպավորություններով ու գործերով, բայց դրանք ի զորու չեն այն լցնելու, որովհետև դատարկությունն անհուն է, իսկ միջոցները՝ սահմանափակ:

Ամեն անգամ, երբ մարդը փորձում է զվարճություններով լռեցնել ներքին ձայնը, միմիայն ավելի հստակ է սկսում լսել իր դատարկությունը:

Աստված յուրաքանչյուր մարդու սրտում մի դատարկություն է ստեղծել, որը չի կարող որևէ այլ բանով լցվել, քան Արարիչ Աստծով, Որին և կարելի է ճանաչել Հիսուս Քրիստոսով:

Ով երջանկության տուն է մտնում հաճույքների դռնով, այդպիսի մեկը սովորաբար դուրս է գալիս տառապանքների դռնով:

➥ էջ 8

Բլեզ Պասկալի ասույթներից

↩ էջ 7

Մենք երջանիկ կլինեինք, եթե կարողանայինք ավելորդ բաներ չցանկանալ:

Երջանկությունը շատ բան ձեռք բերելու մեջ չէ, այլ քչով բավարարվելու ունակության:

Երջանկությունը չի կարող կայուն լինել, եթե խարսխված չէ ներքին կարգավորության վրա:

Սոսկ երեք տեսակի մարդիկ կան: Ոմանք գտել են Աստծուն և ծառայում են Նրան. այդ մարդիկ խոհեմ են ու երջանիկ: Այլք չեն գտել և չեն փնտրում Նրան. այդպիսիք անմիտ են ու դժբախտ: Մյուսները չեն գտել, բայց փնտրում են Նրան. այդ մարդիկ խոհեմ են, բայց տակավին դժբախտ:

Մենք այնքան անխոհեմ ենք, որ դեգերում ենք մեզ չպատկանող ժամանակներում՝ չխորհելով մեզ շնորհվածի մասին:

Մենք երբեք կանգ չենք առնում ներկայում: Մտաբերում ենք անցյալը, կանխավայելում ապագան, ասես կամենում ենք արագացնել նրա չափազանց դանդաղ շարժումը, կամ հիշում ենք անցած-գնացածը, որպեսզի կանգնեցնենք նրա վաղանցիկությունը: Մենք այնքան անշրջահայաց ենք, որ դեգերում ենք մեզ անմատչելի ժամանակներում և ամենևին չենք մտածում մեզ պատկանող միակ ժամանակի մասին:

Մարդը ներքուստ այնպիսին է, որ միշտ հույս է փայփայում երջանկություն գտնելու, ուստի երբեք չի կարողանում օգտվել նրանից, ինչ որ ունի:

Մենք այնքան փութագին ենք զվարճություններ փնտրում, ասես դրանք ի զորու են մեզ փրկել:

Եթե Աստված ժամանակ առ ժամանակ մեզ «մեջքով գետնին չտար», մենք երկնքին հայելու ժամանակ չէինք ունենա:

Կամենում եք հավատքի գալ, բայց չգիտեք՝ ինչ ճանապարհով. կամենում եք ապաքինվել անհավատությունից և բալասան եք որոնում: Այդ մասին հարցրե՛ք նրանց, ովքեր ձեզ պես կապանքված են եղել, իսկ հիմա զոհաբերում են իրենց ողջ ունեցվածքը: Այդ մարդիկ գիտեն ճանապարհը, որով մտադիր եք ընթանալ՝ ապաքինվելու այն ախտից, որից կամենում եք ձերբազատվել: Սկսեք այնու, ինչով նրանք են սկսել, իսկ նրանք սկսել են այնու, ինչ որ արել են բոլորը, ասես հավատքի մեջ արդեն հաստատված՝ օրհնված ջուր են խմել, հիվանդների և ննջեցյալների համար աղոթքներ պատվիրել և այլն: Հենց դա էլ կուսուցանի ձեզ հավատալ և խոնարհեցնել ձեր միտքը:

Բացահայտ հայտնվելով նրանց, ովքեր ի սրտե փնտրում են Իրեն և թաքնվելով նրանցից, ովքեր ի սրտե փախչում են Իրենից՝ Աստված կարգավորում է մարդկային գիտելիքն Իր մասին: Նա նշաններ է տալիս՝ տեսանելի Իրեն որոնողներին և անտեսանելի Իր նկատմամբ անտարբերներին: Նրանց, ովքեր ցանկանում են տեսնել, Նա բավական լույս է տալիս, իսկ նրանց, ովքեր տեսնել չեն ուզում՝ բավական խավար:

Սեփական սիրտը չլսելու համար մարդիկ պատրաստ են աշխարհը աղմուկով լցնելու:

Մարդն առանց Աստծու՝ անղեկ նավ է խռովահույզ ծովում:

Արդարությունն առանց ուժի՝ լոկ անզորություն է, ուժն առանց արդարության՝ բռնակալ:

Մարդիկ սովորաբար ատում են նրանց, ում հանդեպ չարիք են գործել:

Մենք ներքուստ այնպիսին ենք, որ ավելի շուտ հավատում ենք ուրիշներից լսածին, քան ինչին որ ինքներս ենք հասու եղել:

Ամենավտանգավոր սուտը դույզն-ինչ աղավաղված ճշմարտությունն է:

Որքան ավելի խելացի ու բարի է մարդը, այնքան ավելի լավ է նկատում մարդկանց մեջ դրականը: Ապրե՛ք՝ բարություն գործելով ինչպես ձեր, այնպես էլ մյուսների համար:

Մարդիկ հակված են հավատալու ոչ թե նրան, ինչը կարելի է ապացուցել, այլ նրան, ինչն իրենց ճաշակով է:

Մեր մտքին հատուկ է հավատալը, կամքին՝ ցանկանալը, իսկ եթե մարդիկ չունեն հավատալու և ցանկանալու համար պատվարժան առարկաներ, ապա միտվում են անպատվարժան բաների:

Մարդիկ բաժանվում են արդարների, ովքեր իրենց մեղավոր են համարում, և մեղավորների, ովքեր իրենց բարեպաշտ են համարում:

Ճշմարտությունն ու արդարությունն այնքան փոքրիկ կետեր են, որ մեր կոպիտ գործիքներով դրանք նշանառության տակ առնելով՝ գրեթե միշտ վրիպում ենք:

Մարդու բարոյական արժանիքների մասին պետք է կարծիք կազմել ոչ թե նրա գործադրած առանձին ջանքերի հիմամբ, այլ ամենօրյա կյանքի:

Ոչինչ այնքան հարիր չէ բանականությանը, որքան նրա անվստահությունն իր իսկ նկատմամբ:

Սիրտն է Աստծուն զգում, ոչ թե բանականությունը:

Ճշմարտություն կա, որին մարդ հասու է լինում ոչ թե մտքով, այլ սրտով:

Մենք երջանիկ ենք լինում այնժամ, երբ զգում ենք, որ մեզ հարգում են:

Մարդու բոլոր դժբախտությունների պատճառն իր տանը հանգիստ նստել չկամենալն է:

Աստծու ճանաչողությունն առանց սեփական մեղավորության ճանաչողության հանգեցնում է հպարտության: Սեփական մեղավորության ճանաչողությունն առանց Աստծու հանգեցնում է հուսահատության: Իսկ Հիսուս Քրիստոսի ճանաչողությունը առաջնորդում է առ ճշմարիտ ուղի, քանզի հանձին Նրա ենք գտնում Աստծուն:

Բնությունն իր մեջ կատարելություններ է ամփոփում, որպեսզի ցույց տա, որ ինքը Աստծու արտացոլանքն է, բայց նա թերություններ էլ ունի, որպեսզի ցույց տա, որ ինքը միայն Նրա արտացոլանքն է:

Երկու տեսակի ճշմարտություններ կան. առաջինները ինքնին ակներև են, իսկ մյուսները բացահայտվում են առաջինների միջոցով. երկուսն էլ հարկավոր են:

Մարդը խորհող եղեգ է. նրան կործանելու համար հարկ չկա, որ ողջ տիեզերքը նրա դեմ ելնի. ջրի մի քանի կաթիլն էլ բավական է նրան կործանելու: Բայց եթե տիեզերքը կործաներ էլ նրան, մարդը, միևնույնն է, ավելի մեծ կլիներ իրեն սպանողից, քանզի գիտակցում է, որ մահկանացու է, իսկ տիեզերքն իր գերազանցության մասին ոչինչ չգիտի:

Անծայրածիր տարածությունների հավերժական լռությունն ինձ վախեցնում է:

Անարդարությանը համբերելն անարդարություն գործելուց լավ է:

Մենք Աստծուն այնքան ենք պարտական, որ հավերժությունն անգամ չի բավարարի՝ վճարելու մեր պարտքերը: Փոխարենը մենք կարող ենք երախտապարտ գտնվել:

Եթե մենք իրապես գիտակցեինք, թե քանի անգամ է Աստված մեզ բռնած պահել ընկնելուց, ապա մեր մնացած կյանքը կանցկացնեինք լուռ զմայլանքի մեջ:

Եթե կամենում եք, որ ձեր մասին լավ խոսեն, ձեր մասին լավ մի՛ խոսեք: Կամենում եք, որ մարդիկ հավատան ձեր առաքինություններին, մի՛ պարծեցեք դրանցով:

Ոչինչ այնպես չի խանգարում շիտակությանը, ինչպես շիտակ երևալու ցանկությունը:

Մարդուն ի վերուստ տրված ամենամեծ արտոնությունը ինչ-որ մեկի կյանքում լավ փոփոխությունների պատճառ դառնալն է:

Մեր ողջ արժանիքը մտածելու ունակությունն է, ջանանք ըստ արժանվույն մտածել. դրանում է բարոյականության հիմքը:

Բարի գործերի մեջ լավագույնը դրանք ծածուկ պահելու ցանկությունն է:

Որքան շատ եմ իմանում, այնքան ավելի հստակ եմ տեսնում՝ որքան շատ բան չգիտեմ:

Ինչպես որ ծովը նետած քարն է ներգործում ողջ ծովի վրա, այնպես էլ յուրաքանչյուր մարդու արարքը՝ ողջ մարդկության վրա:

Մարդու զգայությունը չնչին բաների նկատմամբ և անզգայությունն էականների նկատմամբ՝ ինչ սարսափելի այլասերվածություն է:

Չկա առավել մեծ դժբախտություն, քան երբ մարդը սկսում է վախենալ ճշմարտությունից, ինչ է թե այն չհանդիմանի իրեն:

Ավետարանը մխիթարում է մարդուն, ինչ վիճակում և ինչ պայմաններում էլ լինի: Քրիստոս առինքնում է ողջ մարդկությանը: Առանց Նրա վարդապետության՝ մենք ոչինչ չգիտենք Աստծու մասին և ոչինչ չենք տեսնում մեր մեջ. առանց Քրիստոսի՝ ամեն ինչ մեզ համար խավար է ու խառնաշփոթություն: Առանց Նրա վարդապետության՝ մարդը մատնված է արատների և աղետների, մոլորության, խավարի, հուսահատության ու մահվան: Հետևելով Քրիստոսի ուսմունքին՝ մարդիկ կարող են ձերբազատվել այդ ամենից: Մեր բովանդակ առաքինությունն ու երանությունն ի Քրիստոս է: Առանց Քրիստոսի վարդապետության՝ մարդիկ կհոշոտեին միմյանց, աշխարհը դժոխքի կվերածվեր և կայլասերվեր:

Պասկալի աղոթքը

Ես չեմ խնդրում Քեզանից ո՛չ առողջություն, ո՛չ հիվանդություն, ո՛չ կյանք, ո՛չ մահ: Միայն խնդրում եմ. տնօրինի՛ր այդ ամենը՝ հանուն Քո փառքի: Վարվի՛ր ինձ հետ ըստ Քո կամքի: Տո՛ւր էլ ինձ, վերցրո՛ւ էլ ինձանից, միայն թե իմ կամքը հաստատի՛ր Քո կամքի համեմատ: Միմիայն մի բան գիտեմ, Տե՛ր. Քեզ հետևելը լավ է, Քեզ ցավ պատճառելը՝ վատ: Եվ սրանից անդին ես չեմ տարբերում, թե որն է բարին և որը՝ չարը:

Ես չգիտեմ, թե ինչն է ինձ համար բարին՝ առողջությո՞ւնը, թե՞ հիվանդությունը, հարստությո՞ւնը, թե՞ աղքատությունը. այս աշխարհում ես ոչինչ չգիտեմ: Այս գիտությունը դուրս է մարդկանց և հրեշտակների հասկացողության սահմաններից. այն թաքնված է Քո նախախնամության գաղտնարաններում. նախախնամություն, որի առաջ ես խոնարհվում եմ և որը չեմ էլ փորձում հասկանալ: Դու ես Իշխանը, Դու ես Տերը: Միայն Դու գիտես, թե ինչն է ինձ նպատակահարմար: Եղիցի՛ կամք Քո:

Պատրաստեց Գրիգոր Դարբինյանը

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Նշան Աբասյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am

web կայք՝ www.armenianchurch.org

Ստոր. տպագր. 11.11.2026 թ.